Azg
armenian daily
30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1995. ՇԱԲԱԹ # 188 (942)

Սերտիֆիկատի գինը անցավ 9 հազարից եւ աճելու միտում ունի

Երեկ, սեպտեմբերի 29-ին, Երեւանում կրկին աճեց սեփականաշնորհման սերտիֆիկատի գինը, որը երեկոյան արդեն տատանվում էր 22-23 ԱՄՆ դոլլարի սահմաններում (առք՝ 8200, վաճառք՝ 9200): Վաուչերի գնի նման աննախադեպ աճը, որը մի քանի օրերի ընթացքում կազմել է շուրջ 65-70 տոկոս, մասնագետների կարծիքով պայմանավորված է սեփականաշնորհված եւ սեփականաշնորհվող տարբեր արտադրություններեր ֆանակով եւ խոստանում է ստանալ շարունակելի ընթացք: Սեպտեմբերի 29-ին տարադրամի փոխանակման կետերը, որոնք, արդեն մի քանի ամիս իրավունք են ստացել կատարելու նաեւ սեփականաշնորհման սերտիֆիկատների առուվաճառքի գործողություններ, զբաղված էին գերազանցապես վաուչերային գործառնություններով: Մինչդեռ նկատելի էր, որ հիշյալ գործառնություններն ավելի ինտենսիվ եղանակով ընթանում էին ծեռքի վրա. եթե տարադրամի փոխանակման կետերի վերջին օրերի հիմնական գործը ֆաղաքացիների սերտիֆիկատների գնումն էր, արդա դուրսը՝ ծեռքի վրա առուվաճառքի միջեւ եղած հաշվեկշիռն ավելի մեծ թիվ է կազմում:

Ա. Դ.

ԵՐԵՎԱՆ

Գագիկ Հարությունյանը ընդունեց ՈԱԿ դատվիրակությանը

Հայաստանի Հանրապետության փոխնախագահ Գագիկ Հարությունյանը սեպտեմբերի 29-ին ընդունեց ՈԱԿ 19-րդ դասգամավորական ժողովում ընտրված Կենտրոնական վարչության դիվանի անդամներ դոկտոր Գրիգոր Ադանալյանին, Մայք Խառաղյանին, Պարույր Աղբաբյանին եւ ՈԱԿ-ի նախագահ Լեւոն Բլեֆյանին: Զրույցի ընթացքում, նախագահի մամուլի ծառայության տեղեկատվության համաձայն, ուսիագրիռ եւ գործնական խոսակցություն է ծավալվել Հայաստան-Սփյուռք հարաբերությունների, անկախ պետականության ամրապնդման, Արցախին աջակցելու, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեության եւ մի շարք այլ հարցերի շուրջ: ՈԱԿ-ի դատվիրակությունը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության եւ անկեղծ զրույցի համար, ընդգծել է ՈԱԿ նորընտիր Կենտրոնական վարչության որդեգրած հաստատակամությունն ու սկզբունքային զորակցությունը Հայաստանի իշխանություններին՝ ազգային պետականության ամրապնդման դժվարին խնդիրների լուծման գործում:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ղարաբաղյան բանակցությունները կշարունակվեն Ալանդյան կղզիներում

Տարածաշրջան կատարած այցի շրջանակներում սեպտեմբերի 29-ին Երեւանում էր գտնվում ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի համանախագահության դատվիրակությունը, համանախագահներ Հենկի Տալվիտիեի եւ Վալենտին Լոգինովի գլխավորությամբ: ՀՀ ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնեցին, որ դատվիրակության կազմում էին Մինսկի խմբի համանախագահներ, դեսպաններ Ռենե Նյուբերգն ու Վլադիմիր Կազիմիրովը, Մինսկի խմբում Թուրքիայի ներկայացուցիչ Այհան Քամելը, ԱՄՆ-ի փոխդատվիրակը, ինչպես նաեւ ԵԱՀԿ նախագահողի հանձնարարությամբ դատվիրակությանը միացած ըվեյցարացի դիվանագետ Տալբեր Փուռնիերը: Այցի նպատակն էր, հենվելով հակամարտող կողմերի միջեւ սեպտեմբերին Մոսկվայում կայացած բանակցությունների արդյունքների վրա, նախադատրաստել բանակցությունների փուլը: Պատվիրակությանն ընդունել եւ հանգամանալի զրույց է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վարդան Օսկանյանը: Հանդիպման ընթացքում կարեւորվել է հակամարտության կարգավորման, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության միասնական միջոնորդության կենտրոնական դերը: Կողմերը նշել են նաեւ 1994 թ. Բուդապեշտի վեհաժողովից ի վեր խաղաղ գործընթացում նկատվող առաջընթացը: Հանդիպման մասնակիցները կարծիքներ են փոխանակել զինված հակամարտության դադարեցման մասին, համաձայնության որոշ դրույթների շուրջ կողմերի դիրքորոշումների մերձեցման վերաբերյալ:

Քննարկվել են նաեւ հրադադարի ամրապնդման եւ խաղաղ գործընթացի հետագա զարգացման համար կարեւոր նշանակություն ունեցող ռազմաշինական բնույթի մի շարք խնդիրներ: Հանդիպման ընթացքում նշվել է գործընթացի ներկա փուլում կողմերի միջեւ փոխադարձ վստահության ամրապնդման կարեւորությունը: Համանախագահությունը տեղեկացրել է, որ ԼՂ հակամարտության կարգավորման շուրջ բանակցությունների հաջորդ փուլը կկայանա այս տարվա հոկտեմբերի 9-15-ը Ալանդյան կղզիներում (Ֆինլանդիա), իսկ հոկտեմբերի 16-ին Հելսինկիում կգումարվի ԵԱՀԿ Մինսկի խմբի ընդլայնված նիստ հակամարտության կողմերի մասնակցությամբ:

Գ. Մ.

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Ռուսաստանը բարոյական պարտք ունի Ղարաբաղի նկատմամբ

Վերջերս տարբեր երկրների քաղաքական գործիչներ, ինչպես նաեւ լրատվության որոշ ազդեցիկ միջոցներ բավականին աշխուժորեն քննարկում են ադրբեջանական-միջինասիական նավթի ճակատագրի եւ նոր նավթամուղի կառուցմանն առնչվող հարցերը. հատկապես կառուցվելիք նավթամուղի երթուղու հանգուցային խնդիրը: Հասկանալի է, որ երթուղու ամեն մի տարբերակ կազմված է որեւէ պետության կամ մի շարք պետությունների շահերի հետ: Եւ այդ երկրներից յուրաքանչյուրը պաշտպանում է իր համար ձեռնտու տարբերակը: Հայկական շահերի տեսանկյունից Ադրբեջան-Հայաստան-Թուրքիա տարբերակը անշուշտ մի կողմից օգտակար է Հայաստանի եւ Ղարաբաղի տնտեսական-քաղաքական զարգացման համար, հաշվի առնելով նավթի հնարավորությունները եւ նավթամուղի անցկացման դիմաց վճարվող շահաբաժինը: Դադնիի չէ, որ հիշյալ տարբերակի իրականացման դեմ հում զգալիորեն մեծանում է հայկական երկու պետությունների նշանակությունը տարածաշրջանում անվտանգության եւ կայունակության ապահովման տեսակետից, քանի որ նավթամուղի անցկացման հետ կապված աշխատանքներ մեծապես կախված են ՀՀ եւ ԼՂՀ դիրքորոշումից: Սակայն այստեղ խոսքը միայն նավթամուղի մասին չէ: Կան ավելի գլոբալ խնդիրներ եւ առաջին հերթին, թե ինչպես է Արեւմուտքը կարվելու Միջին Ասիայի հետ, որպեսզի կարողանա դարձնել այն կաղնյաս նեղությունների, քաղաքական կողմնորոշման եւ ազդեցության, տնտեսական հումքի դուրս հանման համար մի տարածաշրջան: Այս-աշխատանքը պահանջում է առնվազն մի քանի տասնամյակ: Միջին Ասիային Արեւմուտքի հետ կապող միակ իրական եւ ամենակարճ ճանապարհն անկասկած անցնում է Հայաստանի տարածքով եւ նավթամուղն 1-ին փորձն է իրականացնելու այդ կապը:

Տես էջ 8

ՍԱՀՄԱՆ

Այս անգամ նաեւ Երասխավանը

Սեպտեմբերի 28-ին, օրվա երկրորդ կեսին դարձյալ խախտվել է հրադադարը հայ-ադրբեջանական սահմանում: ՀՀ պաշտպանության նախարարության մամուլի եւ լրատվության վարչությունից Արմենպրեսին հայտնեցին, որ ադրբեջանական կողմը ժամը 14.03-ից մինչեւ 14.15-ը հրաձգային տարբեր զինատեսակներով գնդակոծել է Երասխավանի, ժամը 19.00-ից մինչեւ 19.05-ը խոշոր տրամաչափի գնդացիրներով Կրասնոսելսկի շրջանի Վահան գյուղի եւ 21.10-ից մինչեւ 21.25-ը նռնականետից Նոյեմբերյանի շրջանի Դովեղ գյուղի պաշտպանական դիրքերը: Տուժածներ եւ ավերածություններ չկան: Բոլոր նշված դեպքերում Հայաստանի զինված ուժերը հսկաստակորդին հարկադրել են դադարեցնել կրակը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԼՂՀ ՆԳ նախարարը պաշտոնանկ

Սեպտեմբերի 29-ին ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հատուկ հրամանագրով ԼՂՀ ներքին գործերի նախարար Արմեն Առամայիսի Իսագուլովը ազատվեց իր պաշտոնից: ■

Կոթիի բնակիչը ազատվեց գերությունից

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Մեկ ամիս Ազգային անվտանգության նախարարության Նոյեմբերյանի բաժանմունքը բանակցություններ էր վարում ադրբեջանական կողմի հետ Կոթի գյուղի 66-ամյա բնակիչ Նասիբ Թուխարյանին գերությունից ազատելու համար: Վերջինս օգոստոսի 29-ին գնացել էր Կոթիի սահմանամերձ անտառ փայտի, որտեղից եւ առեւանգվել էր: Փաստի թղթակիցը Ազգային անվտանգության նախարարության Նոյեմբերյանի բաժանմունքի պետ, մայոր Ալեքսանդր Սառուքյանից տեղեկացավ, որ ի վերջո, նրան փրկելու ջանքերը պսակվել են հաջողությամբ: Սեպտեմբերի 28-ի երեկոյան Նոյեմբերյանի Դովեղ եւ Ղազախի շրջանի Քամալու գյուղերի սահմանագծում կատարվել է գերիների փոխանակում: Նասիբ Թուխարյանը փոխանակվել է Քամալու գյուղի 65-ամյա բնակիչ Փաշա Ալիփաշաեւի հետ: Ադրբեջանցիներին է հանձնվել նաեւ 33-ամյա զինծառայող Իլգամ Իսմայլովի դիակը: Իսմայլովը զոհվել էր սեպտեմբերի 21-ին Նոյեմբերյանի սահմանագծում ադրբեջանցիների կատարած ոտնձգության ժամանակ: ■

Չինաստանը Իրանին չի տա ռեակտորներ

Ամերիկյան պաշտոնական անձինք հայտնեցին, որ Չինաստանը չեղյալ է հայտարարելու Իրանին միջուկային ռեակտորներ մատակարարելու պայմանագիրը: Վաշինգտոնի համար դա անակնկալ էր: Այդ մասին Ամերիկայի պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերի հետ հանդիպման ժամանակ հայտնել է Չինաստանի արտաքին գործերի նախարար Ցզյան Ցզի Չենը: Չինական կողմը հայտարարել է, որ Իրանին 2 միջուկային ռեակտոր մատակարարելու համաձայնագիրը ենթարկվել է մանրազնին ուսումնասիրության եւ չի կատարվելու:

BBC

ԱՇԽԱՐՀ

Թուրքիան տագնապած է ԱՄՆ Սենատի որոշումից

28 ՍԵՊՏԵՄԲԵՐ, TRT: ԱՄՆ-ի Սենատը անորոշ ժամանակով հետաձգեց Թուրքիային որպես ռազմական օգնություն 320 եւ որպես տնտեսական օգնություն 41 միլիոն դոլլար հատկացնելու բանաձեւը: Սենատը ԱՄՆ-ի պետքարտուղարությունից պահանջեց մինչեւ 1996 թ. հունիսի 1-ը ներկայացնել մի զեկուցագիր, որով պետք է պարզվի ամերիկյան զենքը Թուրքիայում քաղաքացիական բնակչության դեմ օգտագործելու հավանականությունը: Այդ կապակցությամբ հրապարակվեց Թուրքիայի արտգործնախարարության հայտարարությունը, որ ափսոսանք է հայտնվում Սենատի որոշման առթիվ, այն անվանելով «խիստ անիրավացի»: Արտգործնախարարությունում կազմակերպված հերթական մամլո ասուլիսում նախարարության փոխխոսնակ Նուրերդին Նուրմանը հայտարարեց. «Տարիներ ի վեր ԱՄՆ-ում գործում են հակաթուրքական բնեռամական լոբիներ, որոնք միաժամանակ վնասում են 2 երկրների շահերին: Մենք ցանկանում ենք, որպեսզի ԱՄՆ Սենատը եւ Կոնգրեսը ձերբազատվեն բնեռամական լոբիների ազդեցությունից, մի հանգամանք, որը բացասաբար է ազդում մեր 2 երկրների հետագա հարաբերությունների վրա»: ■

Բոսնիայում շարունակվում են մարտերը սերբերի եւ խորվաթա-մահմեդական զորքերի միջեւ

Ռազմական գործողություններ ընթանում են Սանսկի Մոստ, Բիհաչ, Կրուպա Կրուպա եւ Կլյուչի շրջաններում: Սերբական հրամանատարության հաղորդագրության համաձայն, թշնամի զորքերին հաջողվել է հյուսիսում հետ վերադարձնել մահմեդական խորվաթական զորքերի զանգված տարածքներ: Արեւմուտքում սերբերը ամրացրել են իրենց դիրքերը Կլյուչի շրջանում եւ արդեն մի քանի օր հաջողությամբ հետ են մղում հակառակորդի հարձակումները: Մահմեդական կողմը սերբերին ներկայացրել է մի շարք պայմաններ, որոնց կատարման դեպքում նա պատրաստ է դադարեցնել ռազմական գործողություններ եւ սկսել բանակցություններ: Պահանջների թվում է նաեւ Բանյա Լուկա քաղաքից սերբական ռազմական ուժերի դուրսբերումը, որը ներկայումս սերբերի միակ ամրությունն է Արեւմտյան Բոսնիայում, եւ նրանք դժվար թե համաձայնվեն դրան: Իսկ դա նշանակում է ռազմական գործողությունների հետագա շարունակում:

Երեկ, Սարաեւոյում ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնական Ռիչարդ Հոլբրուկը, որը ժամանել է տարածաշրջան հակամարտող կողմերի հետ ռազմական գործողությունների դադարեցման հարցը քննարկելու, հայտարարեց, որ վերոհիշյալ հարցում մի ցաքցային դիվանագիտություն շատ փոքր արդյունքի չի հասել: Երեկ Սերբիա ժամանեց նաեւ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալը, որի ուղեւորության նպատակը իրադրությունը տեղում ծանոթանալն է: ■

ԴԱՏ

Գ. Ալավերդյանի որոշ հարցաքննություններ անօրինական համարվեցին

Է. Սիմոնյանը մասամբ հավասար նախաքննական ցուցմունքներ

Սեպտեմբերի 29-ին, «Դեռ» գործի դատավարության առաջին կեսում հարցաքննվողը դարձյալ ամբաստանյալ Գեորգ Ալավերդյանն էր: Հարցումներից պարզ դարձավ, որ նրան ներկայացվել է երկու հոդված՝ 206 (հանցանքի մասին իմանալ չհայտնել), առյուծ 72 (բանդիտիզմ): Ամբաստանյալը նախաքննության ժամանակ առաջին հոդվածով իրեն մեղավոր ճանաչել է, իսկ երկրորդով ոչ: Դատավորի հարցումին ինչո՞ւ է 206-ով մեղավոր ճանաչել, պատասխանեց ինչի ցուցմունքով, որ մեկ տարուց հետո ազատ կարձակվի: Գ. Ալավերդյանի 1995 թ. փետրվարի 6-ի ցուցմունքը ընթերցեց առնելորդ հետո փաստաբան Համլետ Մաքեւոսյանը հանդես եկավ հայտարարությամբ, նշելով, որ փետրվարի 6-ին, առանց փաստաբանի ներկայության, այսինքն օրենքի խախտումով կատարված հարցաքննության արձանագրությունը փաստաթուղթ չի կարող համարվել: Փաստաբաններից մեկ որիշն ավելացրեց, որ Ալավերդյանի պաշտպանը նախաքննության փուլում ունեցել է 11 պաշտպանյալ, որը նույնպես օրենքի խախտում համարվեց: Նրանց անուններն ընթերցելուց հետո փաստաբան Ռաստինն նշեց, որ փաստաբանը երկուսից ավել պաշտպանյալ ունենալու իրավունք չուներ:

Տես էջ 2

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Իրանի մշակույթի գործիչները «Ազգի» խմբագրությունում

Սեպտեմբերի 29-ին «Ազգ» թերթի խմբագրությունում տեղի ունեցավ հանդիպում Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի նախարարության պատասխանատուներ պարոն Սեյեդիի եւ Դամավանդիի հետ: Զրույցի ընթացքում ճնշարկվեցին երկկողմանի ուշադրություն ներկայացնող հարցեր, մասնավորապես նշվեց այն մեծ դերը, որը կարող է խաղալ մամուլը հայ եւ իրանցի ժողովուրդների հաղորդակցական, տնտեսական եւ մշակութային կապերի հետագա զարգացման բնագավառներում: Քննարկվեցին համագործակցության եւ տեղեկատվական կապերի հնարավոր տարբերակներ: Գ. Ռ.

Գյումրի. «Համաձայնություն» -լրագրողներ հանդիպում

«Ազգն» արդեն տեղեկացրել է, որ Գյումրիում չորս կուսակցությունների՝ ԱԻՄ-ի, ԱԺՄ-ի, ՀՈԱԿ-ի, ՀԿԿ-ի հաղորդային կազմակերպությունները ստեղծել են միջկուսակցական եւ համագործակցության մարմին «Շիրակի մարզային համաձայնություն», որի նպատակն է համատեղ աշխատանք ծավալել տեղական հաղորդական եւ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը նպաստելու ուղղությամբ: Սեպտեմբերի 29-ին ԱԻՄ-ի, ԱԺՄ-ի եւ ՀՈԱԿ-ի կազմակերպությունների ղեկավարներ Արաբես Բոյաջյանը, Վահան Թումասյանը եւ Գեւորգ Մկրտչյանը հանդիպում էին կազմակերպել լրագրողների հետ: Հանդես գալով լրագրողների առջեւ, «Համաձայնության» մասնակիցները նշեցին, որ իրենց չպետք է համարել միանշանակ ընդդիմություն: Այն բոլոր ձեռնարկումներում, որոնք ի շահ հաղորդի եւ առաջա մարզի կլինեն, իրենք պատրաստ են համագործակցել իշխանությունների, Ազգային ժողովի՝ տեղի պատգամավորների հետ: «Մարզային համաձայնությունը» կփորձի հարկ եղած դեպքերում հակակշիռ լինել առաջա մարզությանը, քանի որ պաշտոնական կառույցներում այդպիսի հակակշիռ չի նախատեսվում: Որոշ գործունեության առաջիկա կոնկրետ նպատակներ նշվեցին տեղական իշխանության մարմնի գալիք ընտրություններ եւ առաջա մարզության թեկնածության հարցերում վերաբերմունքի հրապարակային արտահայտումը, հաղորդի եւ տարածաշրջանի կարեւորագույն հիմնահարցերի վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրումը, բնակչության հաղորդական ակտիվության մակարդակի բարձրացումը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Սկիզբը էջ 1

Գ. Ալավերդյանն այդպիսով ավարտեց դատարանում ցուցմունքներ տալը, իսկ դատավորը էական հակասություններ տեսնելով դատարանում եւ նախաքննության ժամանակ տված ցուցմունքների մեջ հրապարակեց նրա 1995 թ. հունվարի 16-ի, առաջ աղրիլի 14-ի հարցաքննության արձանագրությունները: Գ. Ալավերդյանին հարցումներ արեցին նաեւ ամբաստանյալներ Գ. Մանուկյանը եւ Հ. Մարգարյանը: Վերջինիս հայտարարությունն այն մասին, որ հավատի տեղեկություններով ինչ Ժորա Վարդանյանը մեկնարանի պեսի հետ վերջերս երեք անգամ հանդիպել է Գեւորգին, նա մերժեց: Հ. Մարգարյանը կրկին պնդեց իր հայտարարությունը, շարունակելով. քանի որ նա չխոստովանեց, այդ հանգամանքը լրջորեն մտահոգում է իրեն: Առաջ ավելացրեց, որ Գ. Ալավերդյանից բացի, քննիչ այցելել է նաեւ մյուս երկու ոչ կուսակցական ամբաստանյալներին: Ավելացնենք, որ Գ. Ալավերդյանը նույնպես նախաքննական իր ցուցմունքները հաստատելու եւ հրաժարվեց դրանցից: Սակայն անձնական բերքիկ ունենալը չհերքեց, սակայն պնդեց, թե լրացրել է միայն Արցախ գնալու նպատակով:

Օրվա երկրորդ կեսին հարցաքննվող ամբաստանյալ Էդիկ Սիմոնյանը, դարձյալ անկուսակցական, նույնպես հավատեց անձնական բերքիկ լրացնելը, այն պայմանավորելով աշխատանքի անցնելու հանգամանքով: Իսկ ինչ վերաբերում է կողմին ասաց, որ դա աշխատանքային հարաբերություն է եղել: Ինքը եղել է ազատամարտիկ, մասնակցել Շուշիի պաշտպանությանը, այնտեղ է տեսել Հրանտ Մարգարյանին, սակայն մտերիմներ չեն եղել: Հաջորդ հանդիպումը եղել է դատարանում, հուլիսի 7-ին: Շուշիից մտերիմ է եղել ամբաստանյալներից Արմենակ Զաքարյանի հետ եւ նրա միջոցով էլ աշխատանքի է անցել Այնբաղի բազայում: Այնտեղ «պահակություն է արել» ամբաստանյալներից մի քանիսի հետ: Նրանցից իմացել է, որ ինչ-որ մեկը Հովիկին ծեծել է եւ պետք է գնեին ծեծողին ու բացատրություն պահանջեին: Ինքը փնտրել է նրան՝ նախապես իմանալով, որ

ԴԱՏ

Գ. Ալավերդյանի որոշ հարցաքննություններ անօրինական համարվեցին

Է. Սիմոնյանը մասամբ հավատաց նախաքննական ցուցմունքները

հայտարարությունն այն մասին, որ հավատի տեղեկություններով ինչ Ժորա Վարդանյանը մեկնարանի պեսի հետ վերջերս երեք անգամ հանդիպել է Գեւորգին, նա մերժեց: Հ. Մարգարյանը կրկին պնդեց իր հայտարարությունը, շարունակելով. քանի որ նա չխոստովանեց, այդ հանգամանքը լրջորեն մտահոգում է իրեն: Առաջ ավելացրեց, որ Գ. Ալավերդյանից բացի, քննիչ այցելել է նաեւ մյուս երկու ոչ կուսակցական ամբաստանյալներին: Ավելացնենք, որ Գ. Ալավերդյանը նույնպես նախաքննական իր ցուցմունքները հաստատելու եւ հրաժարվեց դրանցից: Սակայն անձնական բերքիկ ունենալը չհերքեց, սակայն պնդեց, թե լրացրել է միայն Արցախ գնալու նպատակով:

Օրվա երկրորդ կեսին հարցաքննվող ամբաստանյալ Էդիկ Սիմոնյանը, դարձյալ անկուսակցական, նույնպես հավատեց անձնական բերքիկ լրացնելը, այն պայմանավորելով աշխատանքի անցնելու հանգամանքով: Իսկ ինչ վերաբերում է կողմին ասաց, որ դա աշխատանքային հարաբերություն է եղել: Ինքը եղել է ազատամարտիկ, մասնակցել Շուշիի պաշտպանությանը, այնտեղ է տեսել Հրանտ Մարգարյանին, սակայն մտերիմներ չեն եղել: Հաջորդ հանդիպումը եղել է դատարանում, հուլիսի 7-ին: Շուշիից մտերիմ է եղել ամբաստանյալներից Արմենակ Զաքարյանի հետ եւ նրա միջոցով էլ աշխատանքի է անցել Այնբաղի բազայում: Այնտեղ «պահակություն է արել» ամբաստանյալներից մի քանիսի հետ: Նրանցից իմացել է, որ ինչ-որ մեկը Հովիկին ծեծել է եւ պետք է գտնեին ծեծողին ու բացատրություն պահանջեին: Ինքը փնտրել է նրան՝ նախապես իմանալով, որ անունն Աշոտ է: Հայտնեց նաեւ, որ «անկեսան» 1992 թ. լրացրել, սակայն սխալմամբ գրել է 1993: Ի տարբերություն նախորդ հարցաքննվողի նա ասաց, որ Աշոտին հետաքրքրելու վերաբերյալ զեկուցագրերն էլ ինքն է գրել, երբեմն նաեւ խեղաթյուրված: Այնուհետեւ բողել է աշխատանքը, որովհետեւ մայրը հիվանդ էր, մտահոգված էր նաեւ եղբորով: «Քերոբ» անունը իրեն ծանոթ չէ, ինքը 02 է գրել նրա անվան փոխարեն, որովհետեւ այդպես են ասել: Աշոտին մինչեւ վերջ էլ չի ճանաչել եւ միայն մեկուսարանում, քննիչից է իմացել նրա սպանության մասին: Է. Սիմոնյանին մեղադրել են նաեւ թմրաբիզնեսի մեջ, ձերբակալել են դեկտեմբերի 23-ին եւ նույն օրը հարցաքննել: Հայտնեց, թե իր վրա ճնշում է գործադրվել, որպեսզի հանձն առնի իր մասնակցությունը Աշոտի սպանությանը: Արսեն Արծրունուն երբեւէ չի ճանաչել, տեսել է առաջին դատավարության ժամանակ, հաստատեց, որ Այնբաղի բազայում սպիտակ «Նիվա» է եղել, որը հավաստաթղթեր վարել են բոլորով: «Դրոյի» կառույցի մասին իմացել է մեկուսարանում:

Դատավարությունը կշարունակվի հոկտեմբերի 2-ին:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Կժդտա՞ն հայկական խմիչքները օտարերկրյա փայլով

Մի քանի տարի առաջ պետական կոլան ներխուժեց հայկական կենցաղ, ավելի ուշ՝ արտադրություն եւ փոքրիկ, բարեկազմ շշերը հայտնվեցին գրեթե նույնքան նորահայտ, ժողովրդական կենցաղում «կոշկակարի բուդկա» հորջորջվող կրպակներում՝ ոաբիս երաժշտության անդայման ընկերակցությամբ: Կոկա-կոլան զգալիորեն խուսափեց այդ ճակատագրից: Հիմա մայրաքաղաքում ամեն հայլափտիկ կարմրին են տալիս պատասխաններն ու ցուցանակները՝ ճերմակ մակագրություններով: Կոկա-կոլան ներխուժում է հաղթակարգության բոլոր նորմերին համաձայն՝ գովազդային եւ ֆանակային մեծ բափով, գեղեցիկ կրպակներով: Դրա կողքին պատվավոր խոշորությամբ, «ֆիրմային» խանութ լինելու ակնկալիքով հանդիպում են գերմանական «Հեյնեկեն» գարեջրի պատասխանները: Մյուսները մի քիչ ավելի համեստ են, ուշադրություն են փորձում գրավել խիտ ու շեղ շարքերով, որոնց կողքին բնականաբար չեն երեւում տեղական արտադրության տխուր շշերը: Եթե իհարկե, կան: Բայց նույնիսկ ուշադիր փնտրտուքը հաճախ հաջողության չի հասցնում: Լավագույն դեպքում հանդիպում ես հայկական կոնյակի, բայց հյութեր, գարեջուր, գինի՝ միայն կիսատ-պռատ պետական խանութների անհիշաղույր ցուցափեղկերում: Շուկայական հարաբերություններ են: Իսկ շուկայում հաղթում է նա, ով ավելի բարձրորակ եւ գեղեցկատես արտադրանք է առաջարկում: Դա է ասում նաեւ նախկին պարենի նախարարությունում համաշխատասխան խնդիրներով զբաղվող պարոն Մելիքոնյանը, որը նույնպես ներխուժում բառն է օգտագործում արտասահմանյան ֆիրմաների մասին խոսելիս. «Բայց սա ազատ տնտեսական գոտի է եւ ոչ մի կարգավորող մեխանիզմ գոյություն չունի, բացի շուկայական հարաբերություններից»:

Պարզվում է, որ արտասահմանյան ֆիրմաների Հայաստանում արտադրվող տեսականին ոչ միայն ներսում պահանջները կարող է բավարարել, այլեւ դրսում վաճառվել, այսպիսով եկամուտ բերել հանրապետությանը: Բացի այդ, միայն Երեւանի ոչ ալկոհոլային ըմպելիքների գործարանը արտադրում է 20-25 հազար դեկալիտր ոչ ալկոհոլային խմիչքներ եւ դրանց մեջ շուրջ 5 հազարն են միայն կոկա-կոլա եւ պեպսի-կոլա: «Սնացածը մեր ազգային ըմպելիքներն են, որոնք դժբախտաբար, դեռեւս չունեն արտաքին անհրաժեշտ հրապուրանքը»: Իմ կարծիքով, խնդիրը միայն այսօրվա նյութական դժվարությունները չեն: Նույնիսկ խորհրդային էժանագին հումքի պայմաններում դիզայնը բոլոր ասպարեզներում տխրելու առիթ էր տալիս: «Գույն չկա», ասում էր մեր ամենասիրված դասախոսը: Բայց այսօրվա խայտաբղետությունն էլ ոչնչով լավ չէ նախկին գորշությունից: Իսկ հայրենական արտադրությունը, այնուամենայնիվ, կաղում է: Դրսում ներկայանալու շենք ու շնորհք չկա, ճանապարհներն էլ՝ իրենց հերթին: Ներսում էլ գրեթե նույն պատմությունն է: Չենք խոսում արդեն այն մասին, որ գյուղացուց բերը գնում են պետական սակագնով (դեռ ծգծգվում է նախորդ տարվա խաղողի բերքի պարտքը), իսկ վաճառում՝ շուկայականով: Եվ վաճառում են ոչ միայն նոր, այլեւ տարիներով պահված խմիչքները:

Նորակազմ նախարարությունը ջանքեր է գործադրում հայրենական արտադրանքը ոտքի կանգնեցնելու համար: Թարխունի, ծիրանի, հայկական մյուս պտուղների հյութերը հին շշերի մեջ եւ նոր պիտակներով թերեւս մրցունակ լինեն նոր շուկայում:

Ա. Գ.

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Յան Կեժուն. «Անհրաժեշտ է կյանքի կոչել Հայաստանի ու Չինաստանի միջեւ կնքված պայմանագրերը»

«Հայ-չինական դիվանագիտական հարաբերություններ պետք է զարգացնեն փոխադարձ հարգանքի, իմքնիշխանության, տարածքային ամբողջականության, հավասարության սկզբունքների հիման վրա»: Այս մասին հայտարարեց ՀՀ-ում Չինաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յան Կեժունը: Նույնն տարան գործակալության բոլորակցի հետ զրույցի ժամանակ դեսպանն ընդգծեց, որ անհրաժեշտ է լուրջ միջոցներ ձեռնարկել, որպեսզի վերջին երեք տարիների ընթացքում երկու երկրների միջեւ կնքված պայմանագրերն ու համաձայնագրերը կյանքի կոչվեն: Չինաստանի ազգային տոնին նվիրված ցերեկույթի ժամանակ ոչն. Յան Կեժունը հաղորդեց նաեւ, որ Չինաստանը հասել է մեծ նվաճումների, այն 1993 թ.-ից աշխարհում առաջին երկիրն է եղել հեռուստացույցների, ածխի, բամբակի եւ մի շարք գյուղատնտեսական աղյուսների արտադրությունում: Չինաստանը առաջին տեղն է զբաղեցնում նաեւ ցեմենտի արտադրությամբ, ԱՄՆ-ից ու Ճապոնիայից հետո երրորդ տեղը պողպատի արտադրությամբ: Յ. Կեժունի վկայությամբ, 1994թ.-ին Չինաստանի համախառն եկամուտն աճել է 11 տոկոսով:

ԼՏ

ՀԱՄԱՌՈՏ

Վրաց խորհրդարանականները ծանոթացան հայ գործընկերների փորձին

Միջխորհրդարանական կապերի շրջանակներում մեկօրյա այցով Երեւանում էին գտնվում Վրաստանի խորհրդարանի պատասխանատու ներկայացուցիչները՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքին, հիմնական ստորաբաժանումների գործունեությանը ծանոթանալու եւ փորձի փոխանակման նպատակով: Այդ ընթացքում Վրաստանի խորհրդարանի վարչությունների եւ բաժինների ղեկավարները, մասնագետներն աշխատանքային հանդիպումներ ունեցան ՀՀ Աժ համապատասխան բաժիններում, քննարկեցին փոխադարձ կապի, տեղեկատվության, մասնագիտական փոխօգնության վերաբերյալ հարցեր: Սեպտեմբերի 29-ին Վրաստանից ժամանած հյուրերը հանդիպեցին նաեւ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար Աշոտ Անտոնյանի հետ, որի ընթացքում ընդգծեցին Հայաստանի խորհրդարանի աշխատակազմի փորձին ծանոթանալու օգտակարությունը եւ կարեւորությունը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Քննարկվել են սիրիա-հայկական համագործակցության հեռանկարները

Դամասկոսից Սանա գործակալությունը հաղորդում է. Սիրիայի Արաբական Հանրապետության արդյունաբերության նախարար Ահմադ Նիզամ ալ Դինը ՍԱՀ մայրաքաղաքում հինգշաբթի օրն ընդունեց Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի պատվիրակությանը եւ քննարկեց երկու բարեկամական երկրների տնտեսական համագործակցության եւ արտանետափոխանակության զարգացման հեռանկարները: Քննարկվեցին նաեւ Հայաստանում սիրիական արտանետների ցուցահանդեսի կազմակերպման հետ կապված միջոցառումները:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՍԻՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 1-ը՝ «Տարեցների օր»

ՄԱԿ-ի օրացույցով հոկտեմբերի 1-ը որպես «Տարեցների օր» նշելը ինքնին առաջարկ է, որ քաղաքակիրթ աշխարհում տարեցները համընդհանուր ուշադրության կենտրոնում են, որ նրանք մոռացված չեն եւ շարունակում են իրենց գործուն մասնակցությունը բերել հասարակության առաջընթացին:

Լինել ողջամիտ, պատրաստ դիմակայելու բոլոր դժվարություններին, որոնք կապված են հանրապետության սոցիալ-տնտեսական վերափոխումների հետ, սաստ կանգնել հայոց անկախ պետականության վեհ գործին. ահա Համահայկական տարեցների միության անդամներիս նպատակը: Միությունն իր գերագույն նպատակներից մեկը համարում է նաեւ միայնակ, անօգնական ծերերի խնամքը, նրանց բուժսպասարկման բարելավումը: Մենք պատրաստ ենք օգնել եւ օժանդակել պետական այն կառույցներին, որոնք զբաղված են նշված հարցերով:

Մեր միությունը առայժմ լայն կապեր չի հաստատել արեւմտյան նման կազմակերպությունների հետ, բայց օգտվելով այն բանից, որ Հայաստանում գործում են բարեսիրական միջազգային մի շարք կազմակերպություններ, նրանց կոչ ենք անում նախաձեռնել եւ հովանի աշխարհի ծերերի հավաք (Ֆորում), նման հավաքներ շատ են կազմակերպվել երիտասարդների, կանանց համար, իսկ տարեցների համար՝ երբեք:

ԵՐԵՄ ԳԱԲՐԱՊԵՏՅԱՆ
Համահայկական տարեցների միության նախագահ

ՈՒՍԿՈՒԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 6 տարի
Ինքնուրույն եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագրություն
Երեւան 375010, Հանրապետության 47
Խմբ 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՍՎԵԼ ԴԻԼԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տարածները ՊԱՎԵԼ ՂԱԼԱՓԵԱՆԻ
Apple Macintosh համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՔԱՐՏԵԶԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երեւանի ատլասի ողիսականը

Չհամեմատվենք այլ երկրների հետ, սակայն խնդիրը հետեւյալն է. մեր հանրապետությունում այնպիսի մեծ նշանակություն ունեցող գործընթացը, ինչպիսին է քարտեզների բողարկումն ու վաճառքը, անհրաժեշտ է, որ տնօրինի ՀՀ կառավարությանն առընթեր գեոդեզիայի եւ քարտեզագիտության ինստիտուտը («Հայգեոդեզիա»): Հակառակ դեպքում անդայման ի հայտ են գալիս ոչ ցանկալի եւ պետությանը դատիվ չբերող «մանրուքներ», որոնք հաճախակամա դառնում են սադրանքային: Ցավոք, այժմ Հայաստանում ստեղծվել է հենց նման իրավիճակ եւ չգիտես որտեղից ծլող, քարտեզագիտության հետ կապ չունեցող հրադարակումները լրջորեն սասանում են հայրենական քարտեզագիտության գիտական սյուները: Առեւմուտքում, օրինակ, որպես կանխամտածված կեղծիք եւ նույն դանդաղարկան ոգուն հարազաս, գնահատվեց այն զառացանքը, որը դատապարտում էր Հայաստանը 6000 տարի առաջ: Բացի այդ, նման դատապարտումներ սխալ է գրանդ քարտեզ անվանել, որովհետեւ զուրկ են ստորական համադասասխան այբուբենից եւ միայն ֆծիծաղ կարող են առաջացնել օտար մասնագետների շրջանակներում: Անհրաժեշտ է, որ «Հայգեոդեզիա» ինստիտուտը, որտեղ դեռ գրաղված են օտար գիտնականներից ոչ դպրաս գիտելիքներ ունեցող խմբագիրներ եւ քարտեզագետներ, ստանա իրոք լուրջ խորհրդատվություն, որ Աստծո վերջին յուրաքանչյուր «անկախ» եւ մոդայիկ բողարկման մենաշնորհը: Անհրաժեշտ է, որ հիշյալ ինստիտուտին ընձեռվի արտոնագիր տալու իրավունք, առանց որի ոչ մի «հրատարակչություն» չունենա որեւէ իրավական դաշտ քարտեզ հրատարակելու համար: Մինչդեռ ներկայումս, երբ իրոք ամեն դպրից ելնելով են գնում անբովանդակ հատակագծերը, նույն «Հայգեոդեզիա» ինստիտուտի քարտեզագիտական բաժինը գործում է ծայրահեղ անբարվոք դայմաններում: Եվ չնայած այդ ամենին, բաժնի անձնակազմը (ի դեղ շաս խմբագիրներ ստիպված եղան ուղղակի մեկնել Հայաստանից եւ մասնագիտական աշխատանքի անցնել այլ երկրներում) դեռ փորձում է աշխատել ազգային նշանակություն ունեցող գործերի վրա, որում ներգրավված են հանրապետության լավագույն մասնագետները: Այդպիսի մի հիմնարար գործ է մասնավորապես «Հայ մշակույթի եւ բնակչության» ատլասը: Այնուամենայնիվ, ստեղծված դայմաններում հնարավոր չէ վերջավորել որեւէ դրսվեր կամ նախաձեռնություն, եւ անելանելիությունն է գուցե քարտեզագիտական բաժնի գործունեությանը խոչընդոտող ամենավճռորոշ գործոնը: Փասը մնում է փաս, այսօր դատարաս են Երեւանի ատլասի բոլոր 43 քարտեզների եւ համադասասխան տեքստերի խմբագրումը, սակայն ինստիտուտը հնարավորություն չունենալով աղահովել գունաբաժանման խնդիրը, ծանր կացության մեջ է ընկել խմբագրական կոլեգիայի ողջ աշխատանքը: Խմբագրակազմի անդամներից են ՀՀ քարտեզագիրների միության, ՀՀ աշխարհագրական ընկերության նախագահ, դրոֆեսոր Լեմվել Վալենտյանը (դատասխանատու քարտուղար), Երեւանի նախագահ Վահագն Խաչատրյանը, ճանաչված աշխարհագետ, Երեւանի դատգամավոր Մաքսիմ Մանասյանը (դատասխանատու խմբագրի տեղակալ): Ատլասի գլխավոր խմբագիրն է հանրապետության լավագույն մասնագետներից մեկը՝ Աիդա Նազարյանը:

1985-ին Մոսկվայի դատվերով սկսվեց Երեւանի ատլասի (ռուսերեն լեզվով) կազմումը, սակայն 1993-ին, երբ գործը փաստորեն ավարտված էր, հայտնի քաղաքական իրադարձությունների հետեւանքով հնարավոր չդարձավ տպագրել այն: Եվ բանի ատլասն ուներ մեծ գիտական եւ ճանաչողական նշանակություն, ինչպես նաեւ ուղղակիորեն կապված էր մայրաքաղաքի հետ (նախկին 1961-ի ատլասը ակնհայտորեն հնացել էր եւ բացի այդ, ադքաս էր նյութերով), Երեւանհուրդը հանձն առավ աղահովել ատլասի լույսընծայումը: Սկսվեց նոր աշխատանք, որը դայմանավորված էր հայերեն տարբերակի ստեղծման անհրաժեշտությամբ (նախաձեռնողները քարտեզագիտության բաժնի աշխատակիցներն էին) եւ այդ ընթացքում ատլասը բնականաբար հարստացավ նոր արժեքավոր նյութերով: Ներկայումս աղեն ավարտված դայմաններում հնարավոր չէ վերջավորել որեւէ դրսվեր կամ նախաձեռնություն, եւ անելանելիությունն է գուցե քարտեզագիտական բաժնի գործունեությանը խոչընդոտող ամենավճռորոշ գործոնը: Փաստը մնում է փաստ, այսօր դատարաս են Երեւանի ատլասի բոլոր 43 քարտեզների եւ համադասասխան տեքստերի խմբագրումը, սակայն ինստիտուտը հնարավորություն չունենալով աղահովել գունաբաժանման խնդիրը, ծանր կացության մեջ է ընկել խմբագրական կոլեգիայի ողջ աշխատանքը: Խմբագրակազմի անդամներից են ՀՀ քարտեզագիրների միության, ՀՀ աշխարհագրական ընկերության նախագահ, դրոֆեսոր Լեմվել Վալենտյանը (դատասխանատու քարտուղար), Երեւանհուրդի նախագահ Վահագն Խաչատրյանը, ճանաչված աշխարհագետ, Երեւանհուրդի դատգամավոր Մաքսիմ Մանասյանը (դատասխանատու խմբագրի տեղակալ): Ատլասի գլխավոր խմբագիրն է հանրապետության լավագույն մասնագետներից մեկը՝ Աիդա Նազարյանը:

1985-ին Մոսկվայի դատվերով սկսվեց Երեւանի ատլասի (ռուսերեն լեզվով) կազմումը, սակայն 1993-ին, երբ գործը փաստորեն ավարտված էր, հայտնի քաղաքական իրադարձությունների հետեւանքով հնարավոր չդարձավ տպագրել այն: Եվ բանի ատլասն ուներ մեծ գիտական եւ ճանաչողական նշանակություն, ինչպես նաեւ ուղղակիորեն կապված էր մայրաքաղաքի հետ (նախկին 1961-ի ատլասը ակնհայտորեն հնացել էր եւ բացի այդ, ադքաս էր նյութերով), Երեւանհուրդը հանձն առավ աղահովել ատլասի լույսընծայումը: Սկսվեց նոր աշխատանք, որը դայմանավորված էր հայերեն տարբերակի ստեղծման անհրաժեշտությամբ (նախաձեռնողները քարտեզագիտության բաժնի աշխատակիցներն էին) եւ այդ ընթացքում ատլասը բնականաբար հարստացավ նոր արժեքավոր նյութերով: Ներկայումս աղեն ավարտված դայմաններում հնարավոր չէ վերջավորել որեւէ դրսվեր կամ նախաձեռնություն, եւ անելանելիությունն է գուցե քարտեզագիտական բաժնի գործունեությանը խոչընդոտող ամենավճռորոշ գործոնը: Փաստը մնում է փաստ, այսօր դատարաս են Երեւանի ատլասի բոլոր 43 քարտեզների եւ համադասասխան տեքստերի խմբագրումը, սակայն ինստիտուտը հնարավորություն չունենալով աղահովել գունաբաժանման խնդիրը, ծանր կացության մեջ է ընկել խմբագրական կոլեգիայի ողջ աշխատանքը: Խմբագրակազմի անդամներից են ՀՀ քարտեզագիրների միության, ՀՀ աշխարհագրական ընկերության նախագահ, դրոֆեսոր Լեմվել Վալենտյանը (դատասխանատու քարտուղար), Երեւանհուրդի նախագահ Վահագն Խաչատրյանը, ճանաչված աշխարհագետ, Երեւանհուրդի դատգամավոր Մաքսիմ Մանասյանը (դատասխանատու խմբագրի տեղակալ): Ատլասի գլխավոր խմբագիրն է հանրապետության լավագույն մասնագետներից մեկը՝ Աիդա Նազարյանը:

1985-ին Մոսկվայի դատվերով սկսվեց Երեւանի ատլասի (ռուսերեն լեզվով) կազմումը, սակայն 1993-ին, երբ գործը փաստորեն ավարտված էր, հայտնի քաղաքական իրադարձությունների հետեւանքով հնարավոր չդարձավ տպագրել այն: Եվ բանի ատլասն ուներ մեծ գիտական եւ ճանաչողական նշանակություն, ինչպես նաեւ ուղղակիորեն կապված էր մայրաքաղաքի հետ (նախկին 1961-ի ատլասը ակնհայտորեն հնացել էր եւ բացի այդ, ադքաս էր նյութերով), Երեւանհուրդը հանձն առավ աղահովել ատլասի լույսընծայումը: Սկսվեց նոր աշխատանք, որը դայմանավորված էր հայերեն տարբերակի ստեղծման անհրաժեշտությամբ (նախաձեռնողները քարտեզագիտության բաժնի աշխատակիցներն էին) եւ այդ ընթացքում ատլասը բնականաբար հարստացավ նոր արժեքավոր նյութերով: Ներկայումս աղեն ավար-

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Արի սկաուտներն անկոտրում կամքով են առանձնանում մյուսներից

Հայ իրականության մեջ վերջին ժամանակներում հարթենապերական մղումներն առանձնապես նկատելի են երիտասարդության շրջանում, երիտասարդություն, որն արդեն մի քանի տարի է, ինչ կազմավորում է արիադաշական խմբավորումներ: Դրանցից մեկը «Արմենական Արիական Շարժում» հասարակական կազմակերպությունն է, որն արդեն շուրջ մեկ ամիս դայքար է մղում ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվելու համար: Ստորեւ ներկայացնում ենք հարցազրույց կազմակերպության կենտրոնական վարչության ատենադեր Գեղամ Միրզայանի հետ:

- Լավ կլիներ սկզբում ներկայացնեիք ձեր կազմակերպությունը:

- Գործում ենք 1989 թվականից: Քաղաքական ոչ մի նպատակ չենք հետապնդում: Մեր գերագույն նպատակը ազգի շահերին ծառայելն է: Վերջերս Խոսրովի անտառում ծառատունկ անցկացնելու նպատակով «Հայաստան» արտադրական միավորումից 500 տնկի խնդրեցինք: Մեզ ասացին՝ Խոսրովի անտառում չի կարելի: Այդ գործը կարող եք կատարել Սեւանի ավազանում: Համաձայնեցինք, բայց հետո դա էլ մերժեցին, դատճառաբանելով, որ արդարադատության նախարարության կողմից գրանցված չենք: Անկեղծ ասած, զարմանալի էր. եթե ուզում ենք ազգի համար լավ գործ կատարել, տվյալ դեդքում՝ հասարակ ծառատունկ անցկացնել, դրա համա՞ր էլ դետք է գրանցվենք: Ստիպված դիմեցինք ՀՀ արդարադատության նախարարությանը գրանցվելու համար:

- Ծառատունկ անցկացնելուց բացի, ուրիշ ի՞նչ նպատակներ ունեք:

- Անել հնարավոր ամեն ինչ՝ բարի եւ ազգանվեր գործի համար: Օրինակ, նախատեսել ենք ձմռանը օգնել հանրապետության տարբեր շրջանների միայնակ բոշակառուներին՝ իրենց հասանելիք նավթը ստանալու եւ տուն հասցնելու գործում: Կազմակերպության անդամներից յուրաքանչյուրին կնշանակենք նավթի բաշխման կետերից որեւէ մեկում, եւ նրանք իրենց աշխատանքով կթեթեւացնեն ծեր մարդկանց ամենաառօրեական հոգսը, թույլ չենք տա նրանց սառչել հերթերում:

- Որքան հասկացա, դուք փորձում եք համատեղել քիմուրականության եւ արիականության գաղափարները: Այո՞:

- Թիմուրականությունը նույն սկաուտությունն է (այսօրվա լեզվով ասած), իսկ սկաուտությունը՝ արիականության դրսեւորումներից մեկը: Սկաուտությունը, որի գաղափարներն ենք որդեգրել մենք, հիմնադրվել է 1908 թ. Անգլիայում, լորդ Բեյդեն Փաուլի ղեկավարությամբ: Իր առջեւ խնդիր է դրել մարդուն դաստիարակել որպես ազգին, ժողովրդին եւ աստծուն դիտանի իսկական քաղաքացիներ: Նույն նպատակներն էլ մենք ենք հետապնդում: Սկաուտն առաջին հերթին խաղաղ ժամանակների, հետո նաեւ դատերազմի ռազմիկ է: Նա գործի եւ գաղափարի զինվոր է, հետեւաբար՝ նաեւ՝ իսկական արի: Լինել ժամանակակից արի հայ, նշանակում է մոտենալ ցեղի ակունքներին, ամենուրեք փնտրել նախնիների ոտնահետքերը, վերականգնել ցեղի բարոյականության մոռացված նորմերը, աշխարհընկալումը:

Մենք կազմակերպելու ենք 8 հոգանոց շարժուն խմբակներ, որոնք բանակումների եւ էաբաբական հավաքների ժամանակ դետք է կատարեն դաշտային վարժանքներ: Տղաները դետք է հմտանան տնակներ, հյուղակներ կառուցելու գործում: Դրանք ձեռքի աշխատանքներ են կոչվում: Բայց կան խմբակներ, որոնք զբաղվում են, օրինակ, դատմական հետազոտություններով, հայ արիների հերոսական անցյալով: Կլինեն խմբակներ, որոնք կզբաղվեն ֆիզիկական դատրաստականությամբ եւ այլն:

- Քանի՞ հոգի եք:

- Հիմա գործում ենք մոտ 80 հոգով: Նրանցից 15-ը խմբադետներ են: Գործում ենք Երեւանի 2 դդրոցներում՝ Վահան Թեքեյանի անվան թիվ 92 կրթական համալիրում եւ Բենիամին Ժամկոչյանի անվան թիվ 119 Ֆրանսիական թեքումով կրթօջախում: Նա խատեսում ենք խմբակներ ստեղծել եւս 3 դդրոցներում: Ունենք կենտրոնական վարչություն, շրջանային վարիչներ եւ խմբադետական կազմ: Ի դեդ, շրջանային վարիչները նույն դես խմբադետներ են, սակայն փոքր ծառու խմբադետներ: Նրանց անմիջական մասնակցությամբ է որոշվում մեր եռամսյա ծրագրերի ուղղվածությունը, որը հետագայում հասցվում է կենտրոնական վարչության կողմից:

- Ո՞վ է ձեզ ֆինանսավորում:

- Սկզբում՝ Ռամկավար ազատական կուսակցության «Արշակ Չոպանյան» ակումբը, հետո՝ Թեքեյան մշակութային միությունը: Հիմա՝ ոչ ոք:

- Իսկ որքա՞ն է ձեր կազմակերպության անդամների միջին տարիքը:

- Տարիքային սահմանափակում չունենք: Թեդես ներկայումս մեր անդամները 8-21 տարեկան են: Հետագայում, երբ մեծանանք, միեւնույն է, նորից կդարձնենք:

- Բայց չէ՞ որ սկաուտական կազմակերպությունները մանկադատանեական են: Եթե 60 տարեկան մարդը ցանկություն հայտնի անդամագրվել ձեզ, կհամաձայնե՞ք:

- Այո, եթե նա հոգով երիտասարդ է:

- Արդարադատության նախարարությունն ինչո՞ւ է մերժում ձեր գրանցումը:

- Նախարարության համադատասխան դատասխանատուն (Վլադիմիր Մանասյան), վերջերս ասաց, թե հիմա ժամանակ չունի եւ մեզանով կզբաղվի հետագայում: Իսկ չէ՞ որ մեկ ամիս է՝ բախում ենք արդարադատության [illegible] Սակայն մենք չենք հուսահատվում, եւ մեր դայքարը շարունակելու ենք: Սկաուտներն, առհասարակ, իրենց անկոտրում կամքով են առանձնանում մյուսներից:

Զրույցը վարեց
ԳԵՂԱՄ ՄԻՐԶԱՅԱՆԸ

ԱՌՈՂՋԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ բժշկագիտությունը նոր լիցքեր ստացավ

Երեք օր Հայաստանի ամերիկյան համալսարանում ընթացող սիմոզիումը նվիրված երիկամների քրոնիկ անբավարարության խնդիրներին, բժիշկների գնահատմամբ անցավ շատ բարձր մակարդակով: Նախաձեռնողներն աղահովել էին բարձրակարգ մասնագետների մասնակցությունը: Կազմակերպիչներից էր «Արարկիր» մանկական կենտրոնը (նախկին հանրապետական մանկական հիվանդանոցը), որտեղ բուժվող երեխաները հանդես եկան մասնակիցների առաջ երգ ու դարով. սեփական հիրավի տաղանդավոր ստեղծագործություններով: Կենտրոնի վիրաբույժ Սահակ Առաքելյանը հայտնեց, որ գործընկերների հանդիպում կազմակերպելու մտադրությունը վաղուց էր ծնվել եւ Հայաստանի երիկամային հիվանդ երեխաների օգնության հիմնադրամի (նախագահ Ժան Պիեռ Բեռնար) ստեղծումը նոպաստեց դրա արագ իրականացմանը: Կենտրոնը գործում է 1990-ից եւ բավականաչափ հաջողություններ է արձանագրել ուրոլոգիայի, նեֆրոլոգիայի եւ վիրաբուժության բնագավառներում: Ամենամեծ հաջողությունը բերեց այն է, որ առ այսօր կատարվել է երիկամների 20 փոխդատվություն, [illegible] 14-ը հաջող եղով: Երիկամ է փոխդատվվել ոչ միայն երեխաների, այլեւ մի քանի մեծահասակների, քանի որ կենտրոնը առայժմ միակն է հանրապետությունում, որ կատարվում է նմանօրինակ գործողություն: Հիմնադրամը գործունեությունն իրականացնում է հիմնականում մանկական կենտրոնում, սակայն մտադիր է ընդլայնել շրջանակը եւ ծրագրի մեջ ընդգրկել Հայաստանի երիկամային հիվանդությունների մյուս մասնագետներին: Պրն. Առաքելյանը կենտրոնի հաջողություններ բացատրեց ոչ միայն մասնագետների անհատական հատկանիշներով, այլեւ օտարերկրյա գործընկերների հետ համագործակցությամբ եւ հիմնադրամի ծրագրի շրջանակում Եվրոդայի լավագույն բժշկական կենտրոններում անցած վերադատրաստումով: Ֆրանսիայում, Բելգիայում, Շվեյցարիայում եւ այլ երկրներում դասընթացների են մասնակցել գրեթե 50 բժիշկներ եւ բուժքույրեր: Ծրագրվում է մեծացնել կենտրոնը եւ ունենալ երկու մեծահասակների եւ փոքրերի բաժիններ: Հիմնադրամը նոպատակ է նաեւ բժշկական սարքավորումների, դեղանյութերի ձեռքբերումը:

Պրն. Բեռնարը բարձր գնահատական տվեց Հայաստանի բժշկագիտական մտքին [illegible], որ միայն տեխնիկական զինվածության դակասն է նրանց խանգարում: Վերջինս հիմնադրամը փորձում է լրացնել իր ուժերի սահմաններում:

Հայ բժիշկների հաջողությունը նկատելի է հատկապես ինդուրոլոգիայի բնագավառում: Ժամանակ անց նրանք ներկայացնելու ավելի շատ բան կունենան: Կենտրոնում բարդ, ավելի սուրբ գործնականում ոչ հանախ դատահող վիրահատություններ կատարելիս հրավիրում են բարձրակարգ մասնագետներ այլ երկրներից: Մինչեւ այժմ վիրահատությունների 90 տոկոսը իրականացվել է մեկենասների շնորհիվ: Հիմա խնդիրն ավելի է դժվարացել: Գումարներն անհրաժեշտ են փոխդատվվող օրգանի եւ դրա տեղափոխման ծախսերը վճարելու համար: Իսկ կենտրոնի բժիշկները շարունակում են աշխատել բարձրագրական հիմունքներով: Դոնորներ մեզ մոտ դառնում են հիմնականում հարազատները: Սակայն այս հանգամանքը ոչ օրենքի սահմանման անհրաժեշտություն ունի: Հիվանդ մարդու վերաբերմունքը մեկ որիշի առողջության հաշվին միշտ չէ, որ երկուսին հաջող եղ է ունենում, եւ խիստ անհրաժեշտ է համաձայնության օրինական դաշտ ունենալը:

ԱԼԲԵՐ ԳԱԼՍՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

46-ԱՄՅԱԿ

Չինաստանը բարեփոխումների ուղիով

Հոկտեմբերի 1-ին Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը նշում է իր կազմավորման 46-րդ տարեդարձը: Պատմական ոչ երկար ժամանակահատվածում, հաղթահարելով անցման շրջանի դժվարությունները եւ ուղղելով մասնավորապես «կուլտուրական հեղափոխության» բույլ տված սխալներն ու դատապարտած վնասները, ՀԺՀ կարողացավ- ասիճանաբար իրականացնել բարեփոխումների այնպիսի խաղաղ կանություն, որը հնարավորություն ընձեռեց նրա տնտեսության վերակառուցմանը եւ գրավելու իր արժանի տեղը զարգացման ուղի բռնած երկրների շարքում:

Հայ ժողովուրդը անծանոթ չէ չին ժողովրդի դարավոր մշակույթին եւ նրա ունեցած անմխիթար ներդումներին համաշխարհային քաղաքակրթության մեջ: Ցավոք, Խորհրդային Միության շրջանում հայ եւ չին ժողովուրդների միջեւ կապերն ու շփումները անմիջական չեն եղել եւ իրականացվել են Մոսկվա կենտրոնի թելադրանքով եւ այդ երկրի նկատմամբ ԽՍՀՄ-ի որդեգրած, երբեմն նաեւ փոփոխվող քաղաքականության անհրաժեշտությունից ելնելով:

Խորհրդային Միության լուծարումից հետո, 1992 թ. աորիլին, Հայաստանի Հանրապետության եւ ՀԺՀ-ի միջեւ հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ, նոր հիմք դնելով հայ չինական կապերի զարգացման եւ դրանց հետագա ընդլայնման համար: Այդ խնդրի իրականացման նպատակով է, որ արդեն չորրորդ տարին իր գործունեությունը ծավալող ՀԺՀ-ի դեսպանությունը Հայաստանում կոչված է ասիճանաբար խորացնելու երկու երկրների ու ժողովուրդների բարեկամությունը եւ ընդլայնելու բազմաբնույթ կապերը:

Մեր ընթերցողներից շատերին անշուշտ կհետաքրքրեն Չինաստանում վերջին տարիներին (80-90-ական թթ.) իրականացվող տնտեսական հինգ կանոնավոր բարեփոխումների ծրագրերը, որոնց իրականացմամբ երկիրը շուտափելի հաջողություններ արձանագրեց ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների զարգացման մեջ: Բարեփոխումների ծրագրերի խորությունը եւ դրանց ներքին ներգործությունը, հավանաբար, կարող է օգնակար դառնալ սոցիալիստական տնտեսության զարգացման փուլերն անցած եւ ներկայիս շուկայական հարաբերությունների ուղին որդեգրած Հայաստանի տնտեսության որոշ ոլորտների զարգացման համար:

1949 թ. Չինաստանի ժողովրդական Հանրապետության հռչակման ժամանակաշրջանից ի վեր եւ հատկապես 1979 թ. բարեփոխումների քաղաքականությանն անցնելու փուլից սկսած Չինաստանի արձանագրած նվաճումները տնտեսության զարգացման բնագավառում չէին կարող իրենց վրա չսեւեռել համայն աշխարհի ուշադրությունը: Շերեպազատվելով 1960-1970-ական թթ. այսպես կոչված «կուլտուրական հեղափոխության» անհաջողություններից եւ պատճառած վնասներից, Չինաստանի ղեկավարությունն այն համոզման է կար, որ աշխարհի ամենաշատ բնակչությունն ունեցող երկրի (շուրջ 1 մլրդ. 200 մլն) առաջընթացը պայմանավորված է միմիայն չինական յուրահատկությունների հիման վրա իրականացվող տնտեսական բարեփոխումների եւ դրանց արդիականացման քաղաքականությամբ: 80-ական թթ. սկզբին որոշվեց բարեփոխումներն անցկացնել տնտեսական համակարգում եւ սկսել հենց գյուղից, եւ դրանք դնելով ընտանեկան կապալի տարբեր ձեւերի ներդրման եւ հասարակական սպասարկման համակարգի ստեղծման, կենտրոնացած գնումների եւ պետության ,գյուղատնտեսական մթերքների պլանային մատակարարումների ասիճանական վերացման, գյուղատնտեսական մթերքների գների մեծ մասի ազատականացման, գյուղում արտադրության կառուցվածքային կարգավորման, բազմաճյուղ տնտեսության եւ գյուղատնտեսության այլանի վրա:

Գյուղում բարեփոխումների հաջող ընթացքը բարենպաստ [illegible] հնարավոր եւ օգնեց փորձ կուտակել տնտեսական համակարգի ամբողջական բարեփոխումների համար: Այդ նպատակով, 1984 թ. Չինաստանի կառավարության ընդունած որոշումները վերաբերում էին բարեփոխումների նոր փուլի՝ քաղաքային բարեփոխումների իրականացմանը: Դա նշանակում էր՝ մի կողմից, սեփականության կառուցվածքային կարգավորում, այսինքն, հանրային տիրապետող սեփականության կողքին խրախուսվում էր տնտեսական տարբեր հատվածների զարգացումը, ընդլայնելով պետական ինքնատնտեսավարման ձեռնարկությունների իրավունքները: Մյուս կողմից, նախատեսվում էր կապալային համակարգի ընդարձակում, ձեռնարկությունների միավորում ու փոխնկան կարգով բաժնետիրության անցկացում, գների բարեփոխումների իրականացում ու շուկաների բոլոր կատեգորիաների զարգացում, պլանավորման, ֆինանսական, դրամաշրջանառության եւ արտաքին առեւտրի, ինչպես նաեւ աշխատավարձի եւ սոցիալական ապահովության համակարգում արմատական վերափոխումների անցկացում:

Հիմք ընդունելով վերոհիշյալ բարեփոխումների ծրագիրը, 1992 թ. Չինաստանի ղեկավարությունը որոշեց ստեղծել սոցիալիստական շուկայական տնտեսության համակարգ: Փաստորեն, դա նշանավորեց պատմական շրջադարձ Չինաստանի ժողովրդական տնտեսության զարգացման մեջ: Սոցիալիստական շուկայական տնտեսությունը միավորվում է սոցիալիզմի հիմնական համակարգերի հետ եւ ինչպես երկրի ղեկավարությունն է նշում, իրենք ստեղծում են սոցիալիստական շուկայական տնտեսություն հենց այն բանի համար, որ շուկան կարողանա հիմնարար դեր խաղալ ռեսուրսների ու միջոցների բաշխման մեջ պետության կողմից մակրոկարգավորություն իրականացնելիս:

1993 թ. Չինաստանի համայնավոր կուսակցության կենտրոնական կոմիտեի երրորդ պլենումի ժամանակ ընդունված «Սոցիալիստական շուկայական տնտեսական համակարգի ստեղծման մի շարք հարցերի շուրջ» որոշումը հիմնականում դարձավ երկրի տնտեսական համակարգի արմատական վերափոխման գլխավոր ծրագիր: Այդ որոշման գլխավոր դրույթներն էին. հանրային սեփականության տիրապետող պայմաններում հենվել տնտեսական տարբեր հատվածների համատեղ զարգացման վրա, շարունակելով պետական ձեռնարկությունների տնտեսական մեխանիզմի ձեւափոխության ընթացքը, ստեղծել ժամանակակից ձեռնարկության մի համակարգ, որը համապատասխանի շուկայական տնտեսության պահանջներին, նախատեսելով պարզություն մտցնել սեփականության հարցում՝ իրավունքների եւ պատասխանատվության, կառավարության եւ ձեռնարկության ֆունկցիաների սահմանազատման մեջ: Վերոհիշյալ որոշման մեջ խնդիր է դրվում նաեւ ստեղծել ազատ շուկաների միասնական համակարգ ամբողջ երկրով մեկ, սերտորեն միավորելով քաղաքային շուկան գյուղական շուկային, ներքին շուկան՝ միջազգայինին: Խնդիր է դրվում խթանել նյութական միջոցների լավագույն տեղաբաշխումը, ապահովել ժողովրդական տնտեսության առողջ գործունեությունը, ստեղծել եկամուտների բաշխման համակարգեր, հիմնելով աշխատանքի բաշխման վրա եւ նախապատվությունը տալով [illegible]ությանն ու արդարությանը, ընթանալ համընդհանուր նյութական ապահովման ճանապարհով: Որոշման մեջ կարեւոր կետերից է նաեւ Չինաստանի իրականությանը համապատասխանող սոցիալական ապահովության բազմաստիճան համակարգի ստեղծումը, խոսանալով սոցիալական երաշխիքներ քաղաքային եւ գյուղական բնակչության համար:

1993-1994 թթ. ընթանալով նախատեսված բարեփոխումների ծրագրերի իրականացման ուղիով, Չինաստանն արագ տեմպեր արձանագրեց ժողովրդական տնտեսության զարգացման բոլոր բնագավառներում, հատկապես զգալի առաջընթացի հասավ գյուղատնտեսության, արդյունաբերության, ֆինանսահարկային, դրամաշրջանառության, արտաքին առեւտրի համակարգերում եւ այլն:

Պետական վիճակագրության վարչության տվյալների համաձայն, 1994 թ. արտադրանքի համախառն ծավալը երկրում կազմել է 4,38 տրիլիոն յուան (1 ԱՄՆ դոլարը=8,30 յուան) նախորդ տարվա համեմատությամբ, աճելով 11,8 տոկոս: Չինաստանում գյուղատնտեսությունը համարվում է ժողովրդական տնտեսության հիմք: 1993 թ. գյուղատնտեսությունը բարձր ցուցանիշների հասավ, համախառն արտադրանքը կազմելով 1099,4 մլրդ յուան, որը 4 տոկոսով բարձր է 1992 թ. համեմատությամբ: Գյուղում բարձր տեմպերի նվաճումը հնարավոր է դարձել նախ եւ առաջ ընտանեկան կապալի արմատավորմամբ, որը բարերար ներգործություն է ունեցել գյուղացու տնտեսական շահագրգռվածության բարձրացման վրա: Բավական է ընդգծել, որ 1993 թ. հացահատիկային կուլտուրաների արտադրությունը կազմել է 444,6 մլրդ կգ, բամբակինը՝ 4,25 մլն տոննա: Գոհացուցիչ արդյունքներ է տվել եգիպտացորենի, բրնձի, սոյայի արտադրությունը: Հացահատիկային կուլտուրաների մեջ ցորենի արտադրությունը կազմում է ընդհանուր բերքի 22 տոկոսը, որի հիմնական ցանքատարածությունները գտնվում են Շանդուն, Խենան, Անխոյ, Շենսի, Ցզյանսու, Խուբեյ, Սիչուան նահանգներում: Բրինձը կազմում է 38,9 տոկոս, եգիպտացորենը՝ հացահատիկային կուլտուրաների համախառն արտադրանքի 23 տոկոսը, որի մշակման հիմնական շրջանները գտնվում են Չինաստանի հյուսիս-արեւելքում եւ հարավ-արեւմուտքում:

Չինաստանում բարեփոխումների հաղթականության իրականացման արդյունքում զգալի հաջողություններ է արձանագրել նաեւ անասնապահությունը: 1994 թ. տվյալներով, արտադրվել է շուրջ 32,26 մլն տոննա միս, 4,987 մլն տոննա կաթնամթերք, 11,80 մլն տոննա թռչնի միս եւ ձու:

Վերջին տարիներին արագ տեմպերով զարգանում է ՀԺՀ-ի արդյունաբերությունը, ապահովելով ձեռնարկությունների տնտեսական արդյունավետությունը: Նախնական հաշվարկներով, 1994 թ. արդյունաբերական արտադրանքի հավելյալ արժեքը կազմել է 1840 յուան՝ 1993 թ. համեմատությամբ աճելով շուրջ 18 տոկոս: [illegible]



տական ձեռնարկությունների արտադրության տեմպերը յուրաքանչյուր եռամսյակ բարձր ցուցանիշներ են արձանագրում: Արդյունաբերության տնտեսական արդյունավետության ընդհանուր ցուցանիշը 1994 թ. կազմել է 96,7 տոկոս, գերազանցելով նախորդ տարվա արդյունքները: ՀԺՀ-ի արդյունաբերական արտադրանքի գլխավոր ճյուղերն են սեւ մետալուրգիան (աշխարհում երկրորդ տեղն է գրավում), որի 21 ձեռնարկությունների տարեկան արտադրանքը դարավերջին կկազմի 100 մլն տոննա պողպատ: Ժողովրդական տնտեսության գլխավոր ճյուղերից մեկը մեքենաշինությունն ու էլեկտրոնային արդյունաբերությունն է, որոնց արտադրանքը ի վիճակի է ապահովել ժողտնտեսության բոլոր բնագավառները՝ բարձրորակ սարքավորումներով, ընդգրկելով հիմնական ձեռնարկությունների, նավթի հետախուզման եւ հանույթի, ռադիոների պատրաստման սարքերի, կապի միջոցների, ռադիոհեռուստատեսության, համակարգիչների ծրագրային ապահովման, էլեկտրոնիկայի եւ այլ ոլորտներ:

ՀԺՀ-ն աշխարհում գրավում է երրորդ հորիզոնականը էլեկտրաէներգիայի արտադրության բնագավառում: 1994 թ. դրությամբ արտադրվել է շուրջ 815,9 մլրդ կվտ/ժամ էլեկտրաէներգիա: Էներգակիրների մեջ ամենագլխավոր եւ կարեւոր աղբյուրը համարվում է ածխի, նավթի եւ բնական գազի արտադրությունը: Երկրում կառուցվում են նաեւ ատոմային էլեկտրակայաններ, որոնց [illegible] պատրաստվել են չին մասնագետների կողմից: Չինաստանը շուտափելի հաջողությունների է հասել նաեւ ավիացիայի եւ տիեզերական արդյունաբերության բնագավառում: Արտադրվում են ռազմական եւ քաղաքացիական ինքնաթիռներ, այդ թվում՝ ռմբակոծիչներ, ուղղաթիռներ եւ օդային այլ հաղորդակցության միջոցներ: Ավիացիոն արդյունաբերությունն այսօր ճանաչում է ձեռք բերել արտաքին շուկայում: Քաղաքացիական ինքնաթիռներն արտահանվում են աշխարհի ավելի քան տասը երկրներ: Իրականացվում են արտասահմանյան ավիաընկերությունների (Կանադա, Գերմանիա, ԱՄՆ, Ֆրանսիա) պատվերները, այնպիսի ճանաչված հասատությունները, ինչպիսիք են Բոինգը, Մակ Դոնելը եւ ուրիշներ:

ՀԺՀ-ի ժողտնտեսության վերջին տարիների նվաճումները կապված են ինչպես տեխնիկ, այնպես էլ բերքի արդյունաբերության բնագավառների զարգացման հետ: Չինական հայտնի մեքենան արտադրությունը, որի արտահանումը համարվում է ամենակարեւոր արտաքինտեսակը, անցյալ տարի երկրին տվել է ավելի քան 22 մլրդ դոլարի շահույթ: Անցած տարի բերքի արդյունաբերության բնագավառում արտադրվել է 1686,4 մլրդ յուանի արտադրանք: Չինաստանի բերքի արդյունաբերության մրցունակ ապրանքները (ձեռնապակի, կավե արտադրանքներ, կոկեղեն, մետաղյա իրեր, էլեկտրատրանսպորտներ, մարզական հագուստներ, խաղալիքներ) հեղեղել են աշխարհի շուրջ 100 երկրների շուկաները: Միայն անցած տարի արտահանման ծավալը կազմել է շուրջ 30 մլրդ դոլար:

Զգալի են արտասահմանցի գործարարների կապիտալ ներդրումները ՀԺՀ: 1993 թ. արտասահմանյան [illegible] ուղղակի ներդրումները կազմել են 26 մլրդ դոլար: Երկրում հաշվվում է 167 ձեռնարկություն օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ (այդ թվում համատեղ ձեռնարկություններ փայատիրական սկզբունքով, ձեռնարկություններ կոմոդերացիայի հիման վրա եւ ձեռնարկություններ բացառապես օտարերկրյա կապիտալի շնորհիվ): Արտասահմանյան ներդրումների օգտագործումը հնարավորություն տվեց Չինաստանին արագացնել էներգառեսուրսների յուրացումը, հաղորդակցության ու կապի միջոցների զարգացումը, ինչպես նաեւ մի շարք հին ձեռնարկությունների տեխնիկական արդիականացումը: Արտասահմանցի ինվեստորները, իրենց հերթին, ստանալով չինական շուկա մուտք գործելու իրավունք, ձեռք են բերում հսկայական շահույթներ: Ի դեմ, Չինաստանում տնտեսական գործունեություն ծավալող օտարերկրյա քաղաքացիների համար մշակվել ու հրապարակվել են ավելի քան հինգ հարյուր օրենքներ եւ դրույթներ: Ավելի քան 30 պետությունների հետ կնքվել են երկկողմանի համաձայնագրեր ինվեստիցիաների ապահովման վերաբերյալ: Այս ամենն ստեղծել է իրավական հիմք եւ իրավաբանական երաշխիքներ Չինաստանում իրենց կապիտալները ներդնող արտասահմանցիների համար: Վերջին մեկ տարում Չինաստանը գերազանցել է երկրում ուղղակի ինվեստիցիաների ցուցանիշով Ֆրանսիային ու Անգլիային, գրավելով աշխարհում երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո:

Չինաստանում բարեփոխումները զգալի դեր են խաղացել երկրի արտաքին տնտեսական կապերի եւ առեւտրի զարգացման մեջ: Արտաքին առեւտուրը, մասնավորապես արտահանումներն ու ներմուծումներն իրենց ծավալներով տարեցտարի ավելանում են: 1993 թ. երկրի արտահանման եւ ներմուծման ընդհանուր ծավալը կազմել է 195,7 մլրդ դոլար (արտահանման ծավալը՝ 91,8 մլրդ դոլար, ներմուծմանը՝ 103,9 մլրդ դոլար): Արտաքին առեւտրի ծավալով Չինաստանը գրավել է աշխարհում 11-րդ տեղը: Հսկայական շուկա հանդիսանալով եւ բաց լինելով ամբողջ աշխարհի առջեւ, 1994 թ. Չինաստանն առեւտրատնտեսական հարաբերություններ է հաստատել ավելի քան 220 երկրների հետ: Այսօր ՀԺՀ արտահանվող հիմնական ապրանքները, որոնց թիվը հասնում է 4497 (շուրջ 120 երկրներում): Դրանց գերակշռող մասն ունի բնական ռեսուրսների յուրացման ուղղվածություն, ներառելով արդյունաբերական արտադրության, տրանսպորտի, առողջապահության եւ հասարակական սպասարկումների ոլորտները:

Չինաստանը տեխնիկական եւ տնտեսական օգնություն է ցույց տալիս զարգացող երկրներին: Համաձայնագրեր են ստորագրվել Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի եւ խաղաղ օվկիանոսի շրջանի 61 երկրներին բազմաբնույթ օգնություն ցուցաբերելու վերաբերյալ:

Շնորհիվ սոցիալիստական շուկայական տնտեսության համակարգի ստեղծման շարունակվում է բարելավվել քաղաքային եւ գյուղական բնակչության կենսամակարդակը: Քաղաքային բնակչության մեկ ընտանիքի հաշվարկով տարեկան եկամուտները միջին հաշվով կազմում են 10 հազար յուան: Նախնական հաշվարկներով քաղաքային բնակչության տարեկան ծախսերը, որոնք ուղղված են կյանքի ապահովմանը կազմում են 3150 յուան (միջին հաշվով յուրաքանչյուր ընտանիքի թիվը 3,3 մարդու հաշվարկով), իսկ գյուղական բնակչության մարդու եկամուտները մեկ մարդու հաշվարկով միջին հաշվով կազմում է 1200 յուան:

Հիմնվելով Չինաստանում բարեփոխումների քաղաքականության հիմնական սկզբունքների ու ծրագրերի վրա եւ հաշվի առնելով վերջին տարիների երկրի ձեռք բերած նվաճումները, ՀԺՀ-ի ղեկավարությունը անում է ամեն հնարավոր արագացնելու տնտեսական բարեփոխումների տեմպերը, ապահովելու գիտա-տեխնիկական առաջընթացը եւ հասարակության զարգացումը երկրում: Ղեկավարության ուշադրությունը եւ ձեռնարկվող քայլերը կենտրոնացված են հատկապես ռազմավարական այնպիսի առաջնահերթ խնդիրների լուծման վրա, ինչպիսին կրթության զարգացումն է: Չին ազգի մշավոր կարողությունների ամբողջական օգտագործման [illegible] է [illegible] երկրի սոցիալիստական արդիականացումը:

ԼՈՒԻՍԻՆ ՉԱԼԵՍՅԱՆ
Պատմագիտության թեկնածու

digitised by A.R.A.R.@

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Քաղաքականությունը որպես տնտեսության շարունակման միջոց

Ռուսաստանում նախընտրական ժամանակաշրջանի հաղթական բառապաշարում հայտնվել են «նոր» տերմիններ կամ, ինչպես նշում են շատ վերլուծաբաններ, «հին» տերմինները ստանում են նոր բովանդակություն:

Հանրահայտ է, որ տերմինների հետ անզգույշ վերաբերմունքը հետզհետությամբ կարող է խոսային վիճակ ստեղծել նույնիսկ ամենակարգապահ մարդկանց մտքերում: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել. 10 տարի առաջ ագիտատորները փորձում էին պարզել, թե իրականում ովքեր են «ծախերը» եւ ովքեր «աջերը»: Ըստ երեւույթին՝ տերմինների նշանակությունն առավել դյուրությամբ հիշելու համար կարեւոր էր Բուլատ Օկուջավայի բանաստեղծական տողը. «Կանգնեցեք աջից, անցեք ձախից»: Ամենը հիշում էին, որ առաջին «ձնհալի» ժամանակաշրջանի այդ երգում առկա էր քաղաքական այլասացություն, ուստի «գնացողները միշտ պետք է ձախ ընդունեն» ձեւակերպումը հետզհետությամբ տարածեցին նաեւ երկրորդ՝ վերակառուցողական «ձնհալի» ժամանակաշրջանի վրա: Իսկ մտավորականության համար կարեւորը հետեւյալ ժողովրդական իմաստությունն էր. «Իրավացի է նա, ով ավելի շատ իրավունքներ ունի»: Դրա հետեւանքով անկեղծորեն «ավելի շատ սոցիալիզմ» ուզող եգոր Լիգաչովին անվանում էին «աջ հետադիմական», իսկ Գավրիիլ Պոպովին՝ «ձախ ազատական»:

Այս հարցում այժմ գոնե ընդունված կարգը վերահաստատված է: Հա մենայնդեպս, «կոմունիստներ-ագրարիններ-Ռիբկինի բլոկ-Մեր տունը Ռուսաստանն է-«Ռուսաստանի ընտրություն» հերթագայությունը քաղաքացիների մեծ մասն սկսել է կարդալ ձախից աջ:

Մեր կարծիքով, դրա պատճառը բնավ էլ քաղաքական մտակոյրի միջին մակարդակի ածը չէ: Ավելի շուտ փոխվել է քաղաքական իրավիճակը, այլ կերպ ասած՝ վերջին մի քանի տարում տեղի է ունեցել ռուսաստանցի ընտրողների նախասիրությունների ինչ որ շրջում: Եթե նախկինում ընտրողների համակրանքը փաստորեն անմնացորդ կերպով նրանց կողմն էր, ովքեր փորձում էին «առավել վճռական գնալ վերափոխումների ուղիով» (այսինքն՝ ով ավելի արագ էր գնում, նա էլ առավել համակրելի էր, հետեւաբար, ըստ Օկուջավայի՝ «ձախ»), ապա ներկայումս «ձախից գնացողի» հետ կապվող զուգորդումը կարող է լրջորեն վնասել Դումայի ընտրություններում, քանզի շատերը կարծում են, որ «առանց այդ էլ արդեն բավական հեռու» են գնացել:

Համանման երեւույթ է տեղի ունենում «հայրենասեր» տերմինի հետ: Դեռ վերջերս քաղաքագետներից ոչ մեկը չէր ուզում, որ ինչ որ առիթով ինքն դասակարգեն ըստ այդ հատկանիշի, իրեն հայրենասեր անվանելը մի տեսակ ամոթալի է, իսկ ոչ հայրենասեր անվանելը հիմարություն է եւ ընդունված չէ: Ընդհանուր առմամբ գտան այսպիսի եզր. շարժման անվանման մեջ դրեցին վարիացիաներ ռուսական բեմաներով: Բայց, քանի որ բազմաթիվ քաղաքագետների ջանքերով արտաքին նկրտումների բեման այնքանով ժողովրդականություն է ստացել, այսօր ընտրողների քվեների համար մղվող պայքարում ռուսաստանցի որոշ քաղաքագետներ իրենց մեջ արդեն հաղթահարել են այդ համախտանիշը: Օրինակ, Բորիս Ֆյոդորովն իրեն անվանել է ազատական հայրենասեր, այդուհանդերձ նշելով, որ իր հայրենասիրությունը լիբերալ դեմոկրատ Վլադիմիր Ժիրինովսկու հայրենասիրությունը չէ: Քաղաքագիտության տեսանկյունից կարելի է ասել, որ տարբերություններն այնքան «նուրբ» են, որ չարժե դրանց մասին խոսել:

Ամենը ինչ հարթ չէ նաեւ «ազատական» բառի հարցում: Դասական ըմբռնման համաձայն՝ չի կարելի միաժամանակ շեշտը դնել թե սեփական ազատականության (այսինքն՝ ամենատեսակ ընդհանրությունների՝ խղճի, հանրույթի, պետության նկատմամբ անհատի շահերի գերակայության ընդունման) եւ թե ուժեղ պետականության ձգտման վրա (որը ենթադրում է մասնավորի նկատմամբ հանուրի շահերի գերակայություն): Ստացվում է «Սիրո սերկուհին» ֆիլմում Ալեխանդր Կալյագինի կերտած կերպարի ոգով. «Ուզել եմ ուզում, նի հարել եմ ուզում: Ամեն ինչ ուզում եմ»: Այդուհանդերձ, այսօր այդպես են վարվում Ռուսաստանի փաստորեն բոլոր կուսակցությունները: «Մեր տունը Ռուսաստանն է» կազմակերպությունը մրցակիցներին գերազանցեց, իրեն հորջորջելով «պետական սոցիալական ազատականության» շարժում:

Արեւմտյան քաղաքական տերմինների ներդրման գծով առկա է եւս մեկ նորույթ: Խոսքն այն մասին է, որ «Մեր տունը Ռուսաստանն է» բլոկն անվանում են իշխանության կուսակցություն, իսկ բոլոր մյուսներին՝ ընդդիմություն: Առաջին հայացքից ամեն ինչ ճիշտ է, սակայն համաշխարհային փորձի տեսանկյունից՝ ոչ այնքան: Դասական ըմբռնմամբ իշխանության կուսակցությունն այն կուսակցությունն է, որն ընտրություններում սանելով խորհրդարանային որակյալ մեծամասնություն, կազմել է բացառապես «սեփական» (եւ ոչ թե կոալիցիոն) կառավարություն: Նա ազատ է փոխելու դրա անհատական կազմը, հետեւելով միայն նոր անդամների եւ կաբինետի ղեկավարների կուսակցական վստահելիությանը: Այս առումով Ռուսաստանի տարածքում իշխանության վերջին կուսակցությունը եղել է ԽՄԿԿ-ն, որը խորհրդարանային քվեարկությամբ անցկացրել է իր թեկնածուին՝ Նիկոլայ Ռիժկովին: Իսկ Ռուսաստանի կառավարությունն առհասարակ երբեք չի կազմավորվել խիստ կուսակցական կերպով: Ռուսաստանում ընդունված է հակառակը. կառավարական պաշտոնյաները յուրովի են շարժվում:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ այսօր Ռուսաստանում դասական իմաստով փաստորեն չկան ոչ իշխանության կուսակցություն (որը լիովին պատասխանատու կլիներ ամեն ինչի համար), ոչ էլ ընդդիմություն (որը կառաջարկեր ռուսաստանցի ընտրողներին դեռեւս անհայտ պետական կառավարման ինչ ինչ մոտեցումներ): Գաղտնիք չէ, որ վերջին հինգ տարում ընտրողները երկրի տնտեսական ղեկի մոտ տեսել են ներկայումս գործող փաստորեն բոլոր կուսակցական ղեկավարներին՝ Նիկոլայ Ռիժկովին, Վլադիմիր Շչերբակովին, Գրիգորի Յավլինսկուն, Սերգեյ Գլազևին, Յուրի Սկոկովին, Եգոր Գայդարին, Վիկտոր Չեռնոմիրդինին, Ալեքսանդր Շոխինին, Սերգեյ Շախրային: Նշենք միայն, որ այդ մարդիկ կառավարության տնտեսական բեւեռ տարբեր պաշտոններում առաջատար դերեր են խաղացել «մերը միասին, մերը առանձին, մերը էլ փոխ առ փոխ», ուստի՝ մի քանի անգամ:

Այսպիսով, շարժումների այդ բոլոր ղեկավարներն իրենց օբյեկտիվ ծառայություններն ունեն Ռուսաստանի տնտեսության մեջ, բայց նրանցից յուրաքանչյուրին նաեւ կարող են ներկայացվել ակնհայտ բողոքներ: Հետեւաբար նրանցից ոչ մեկը չի կարող հավակնել ներկայացնելու տնտեսական այնպիսի ծրագիր, որը չմերժվեր արդեն փաստ դարձած տնտեսական իրողության կողմից:

Սրանից հետեւում է, որ այդ կուսակցությունները նախընտրական ճնշումներում երբեմ չեն գտնի ռուսաստանցի ընտրողի «ո՞վ է մեղավոր» հարցի պատասխանը, որը չի իմանա, թե ում դեմ քվեարկի: Ենթադրենք ինչ որ ընդդիմադիր պարոն Չեռնոմիրդինի երեսին է նետում հետեւյալ կոչը. «Չեզ՝ իշխանության կուսակցությանն ո՞վ է խանգարում արդեն

Քաղաքականությունը որպես տնտեսության շարունակման միջոց

թե իրականում ովքեր են «ձախերը» եւ ովքեր «աջերը»: Ըստ երեւույթին՝ տերմինների նշանակությունն առավել դյուրությամբ հիշելու համար կարեւոր էր Բուլատ Օկուջավայի բանաստեղծական տողը. «Կանգնեցեք աջից, անցեք ձախից»: Ամենը հիշում էին, որ առաջին «ձնհալի» ժամանակաշրջանի այդ երգում առկա էր քաղաքական այլասացություն, ուստի «գնացողները միշտ պետք է ձախ ընդունեն» ձեւակերպումը հետզհետությամբ տարածեցին նաեւ երկրորդ՝ վերակառուցողական «ձնհալի» ժամանակաշրջանի վրա: Իսկ մտավորականության համար կարեւորը հետեւյալ ժողովրդական իմաստությունն էր. «Իրավացի է նա, ով ավելի շատ իրավունքներ ունի»: Դրա հետեւանքով անկեղծորեն «ավելի շատ սոցիալիզմ» ուզող եգոր Լիգաչովին անվանում էին «աջ հետադիմական», իսկ Գավրիիլ Պոպովին՝ «ձախ ազատական»:

Այս հարցում այժմ գոնե ընդունված կարգը վերահաստատված է: Հա մենայնդեպս, «կոմունիստներ-ագրարիններ-Ռիբկինի բլոկ-Մեր տունը Ռուսաստանն է-«Ռուսաստանի ընտրություն» հերթագայությունը հաղթահարելու մեծ մասն սկսել է կարդալ ձախից աջ:

Մեր կարծիքով, դրա պատճառը բնավ էլ քաղաքական մտակոյրի միջին մակարդակի ածը չէ: Ավելի շուտ փոխվել է քաղաքական իրավիճակը, այլ կերպ ասած՝ վերջին մի քանի տարում տեղի է ունեցել ռուսաստանցի ընտրողների նախասիրությունների ինչ որ շրջում: Եթե նախկինում ընտրողների համակրանքը փաստորեն անմնացորդ կերպով նրանց կողմն էր, ովքեր փորձում էին «առավել վճռական գնալ վերափոխումների ուղիով» (այսինքն՝ ով ավելի արագ էր գնում, նա էլ առավել համակրելի էր, հետեւաբար, ըստ Օկուջավայի՝ «ձախ»), ապա ներկայումս «ձախից գնացողի» հետ կապվող զուգորդումը կարող է լրջորեն վնասել Դումայի ընտրություններում, քանզի շատերը կարծում են, որ «առանց այդ էլ արդեն բավական հեռու» են գնացել:

Համանման երեւույթ է տեղի ունենում «հայրենասեր» տերմինի հետ: Դեռ վերջերս քաղաքագետներից ոչ մեկը չէր ուզում, որ ինչ որ առիթով ինքն դասակարգեն ըստ այդ հատկանիշի, իրեն հայրենասեր անվանելը մի տեսակ ամոթալի է, իսկ ոչ հայրենասեր անվանելը հիմարություն է եւ ընդունված չէ: Ընդհանուր առմամբ գտան այսպիսի եզր. շարժման անվանման մեջ դրեցին վարիացիաներ ռուսական բեմաներով: Բայց, քանի որ բազմաթիվ քաղաքագետների ջանքերով արտաքին նկրտումների բեման այնքանով ժողովրդականություն է ստացել, այսօր ընտրողների քվեների համար մղվող պայքարում ռուսաստանցի որոշ քաղաքագետներ իրենց մեջ արդեն հաղթահարել են այդ համախտանիշը: Օրինակ, Բորիս Ֆյոդորովն իրեն անվանել է ազատական հայրենասեր, այդուհանդերձ նշելով, որ իր հայրենասիրությունը լիբերալ դեմոկրատ Վլադիմիր Ժիրինովսկու հայրենասիրությունը չէ: Քաղաքագիտության տեսանկյունից կարելի է ասել, որ տարբերություններն այնքան «նուրբ» են, որ չարժե դրանց մասին խոսել:

Ամենը ինչ հարթ չէ նաեւ «ազատական» բառի հարցում: Դասական ըմբռնման համաձայն՝ չի կարելի միաժամանակ շեշտը դնել թե սեփական ազատականության (այսինքն՝ ամենատեսակ ընդհանրությունների՝ խղճի, հանրույթի, պետության նկատմամբ անհատի շահերի գերակայության ընդունման) եւ թե ուժեղ պետականության ձգտման վրա (որը ենթադրում է մասնավորի նկատմամբ հանուրի շահերի գերակայություն): Ստացվում է «Սիրո սերկուհին» ֆիլմում Ալեխանդր Կալյագինի կերտած կերպարի ոգով. «Ուզել եմ ուզում, նի հարել եմ ուզում: Ամեն ինչ ուզում եմ»: Այդուհանդերձ, այսօր այդպես են վարվում Ռուսաստանի փաստորեն բոլոր կուսակցությունները: «Մեր տունը Ռուսաստանն է» կազմակերպությունը մրցակիցներին գերազանցեց, իրեն հորջորջելով «պետական սոցիալական ազատականության» շարժում:

Արեւմտյան քաղաքական տերմինների ներդրման գծով առկա է եւս մեկ նորույթ: Խոսքն այն մասին է, որ «Մեր տունը Ռուսաստանն է» բլոկն անվանում են իշխանության կուսակցություն, իսկ բոլոր մյուսներին՝ ընդդիմություն: Առաջին հայացքից ամեն ինչ ճիշտ է, սակայն համաշխարհային փորձի տեսանկյունից՝ ոչ այնքան: Դասական ըմբռնմամբ իշխանության կուսակցությունն այն կուսակցությունն է, որն ընտրություններում սանելով խորհրդարանային որակյալ մեծամասնություն, կազմել է բացառապես «սեփական» (եւ ոչ թե կոալիցիոն) կառավարություն: Նա ազատ է փոխելու դրա անհատական կազմը, հետեւելով միայն նոր անդամների եւ կաբինետի ղեկավարների կուսակցական վստահելիությանը: Այս առումով Ռուսաստանի տարածքում իշխանության վերջին կուսակցությունը եղել է ԽՄԿԿ-ն, որը խորհրդարանային քվեարկությամբ անցկացրել է իր թեկնածուին՝ Նիկոլայ Ռիժկովին: Իսկ Ռուսաստանի կառավարությունն առհասարակ երբեք չի կազմավորվել խիստ կուսակցական կերպով: Ռուսաստանում ընդունված է հակառակը. կառավարական պաշտոնյաները յուրովի են շարժվում:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ այսօր Ռուսաստանում դասական իմաստով փաստորեն չկան ոչ իշխանության կուսակցություն (որը լիովին պատասխանատու կլիներ ամեն ինչի համար), ոչ էլ ընդդիմություն (որը կառաջարկեր ռուսաստանցի ընտրողներին դեռեւս անհայտ պետական կառավարման ինչ ինչ մոտեցումներ): Գաղտնիք չէ, որ վերջին հինգ տարում ընտրողները երկրի տնտեսական ղեկի մոտ տեսել են ներկայումս գործող փաստորեն բոլոր կուսակցական ղեկավարներին՝ Նիկոլայ Ռիժկովին, Վլադիմիր Շչերբակովին, Գրիգորի Յավլինսկուն, Սերգեյ Գլազևին, Յուրի Սկոկովին, Եգոր Գայդարին, Վիկտոր Չեռնոմիրդինին, Ալեքսանդր Շոխինին, Սերգեյ Շախրային: Նշենք միայն, որ այդ մարդիկ կառավարության տնտեսական բեւեռ տարբեր պաշտոններում առաջատար դերեր են խաղացել «մերը միասին, մերը առանձին, մերը էլ փոխ առ փոխ», ուստի՝ մի քանի անգամ:

Այսպիսով, շարժումների այդ բոլոր ղեկավարներն իրենց օբյեկտիվ ծառայություններն ունեն Ռուսաստանի տնտեսության մեջ, բայց նրանցից յուրաքանչյուրին նաեւ կարող են ներկայացվել ակնհայտ բողոքներ: Հետեւաբար նրանցից ոչ մեկը չի կարող հավակնել ներկայացնելու տնտեսական այնպիսի ծրագիր, որը չմերժվեր արդեն փաստ դարձած տնտեսական իրողության կողմից:

Սրանից հետեւում է, որ այդ կուսակցությունները նախընտրական ճնշումներում երբեմ չեն գտնի ռուսաստանցի ընտրողի «ո՞վ է մեղավոր» հարցի պատասխանը, որը չի իմանա, թե ում դեմ քվեարկի: Ենթադրենք ինչ որ ընդդիմադիր պարոն Չեռնոմիրդինի երեսին է նետում հետեւյալ կոչը. «Չեզ՝ իշխանության կուսակցությանն ո՞վ է խանգարում արդեն

ԱՄՍՏ. «ԱՐԱՐԱՏ» Ի ԱՐԽԻՎԻՑ

ԹՈՒՐՔԻԱ

Կառավարության ճգնաժամը լուրջ խոչընդոտ չէ նրա քաղաքական ակտիվության համար

«Ազգի» նախորդ համարներից մեկում, անդրադառնալով վարչապետ Թանսու Չիլլերի ու նախագահ Սուլեյման Դեմիրելի Անդրկովկաս, Միջին Ասիա եւ Մոնղոլիա կատարած այցերին, ընթերցողի ուշադրությունը հրավիրել էին Թուրքիայի աննախադեպ ակտիվության վրա, որ ցուցաբերվում էր արտաքին քաղաքականության ասպարեզում: Դեմիրելի հայտարարությունը Մոնղոլիայում Ադրիատիկից Չինական ծով ընկած տարածքում Թուրքիայի ստանձնած դերի մասին հիմքեր էր տվել մեկ հանգելու այն եզրակացության, թե Անկարան լոելով վերոհիշյալ դերի մասին, դրանից երբեւէ չի հրաժարվել: Այն ոչ թե օտարազգի էր հանվել, այլ դարձյալ ստանձնվել էր: Թուրքիայի այդ դերը որպես միջոց ռուսական ազդեցության դեմ թեմ կենտրոն ռազմաքաղաքական իրավիճակի ստեղծման հետ նորից օրակարգ մտավ: Քանի որ խոսքը տվյալ դեպքում վերաբերում է ռուսական հակազդեցությանը, որեմն տվյալ դերի վերաբերյալ օրակարգում հաշտվելը չի դարձնում ճանկությամբ: Դրանում մեծապես շահագրգռված է նաեւ Արեւմուտքը: Թերեւս դրա վառ ապացույցը դիվանագիտական ակտիվ շփումներն են, որոնց մեջ սեպտեմբերին հայտնվել էր Անկարան:

Եթե շփումներ շարադրելու լինենք ըստ հաջորդականության, ապա կտացվի բավականին ուշագրավ մի պատկեր: Որեմն, ՆԱՏՕ-ի կողմից սերբական դիրքերի ռմբակոծության նախօրեին Անկարան ընդունեց Բոսնիա Հերցեգովինայի նախագահ Ալիա Իզեթբեգովիչին: Այդ նույն ժամանակ Անկարա է ժամանել ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ռիչարդ Հոլբրուկը, որպես զի բարձ դիվանագետներին ծանոթացնի Բոսնիայի առնչությամբ Վաշինգտոնի ծրագրերին:

Իզեթբեգովիչն ու Հոլբրուկը հանդիպ էին մեկնել Թուրքիայից, այս անգամ Թուրքիան ընդունեց Անգլիայի արտգործնախարար Ռիդլին: Դրան հետեւեց Թուրքիայի արտգործնախարար Էրդալ Ինոնյուի ուղեւորությունը Փարիզ, որ նա մասնակցեց Բոսնիայի հարցով առաջացած շփման խմբի աշխատանքներին: Ինոնյուն Փարիզից անմիջապես մեկնեց Թեհրան, որտեղի Իրանի ու Սիրիայի արտգործնախարարների հետ քննարկի Հյուսիսային Իրաքում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը: Այդ նույն օրերին Թուրքիայի արտգործնախարարությունը նախապատրաստական լուրջ աշխատանքներից հետո դուրս եկավ երկրորդ հանդիպմանը դիտորդի կարգավիճակով ներկայացրեց Թուրքիան: Դրան հետեւեց վարչապետ Թանսու Չիլլերի այցը Վրաստան: Ընդ որում, դա տեղի ունեցավ Ադրբեջան-Արեւմուտք նավթային կոնսորցիումի առաջիկա նիստի նախօրեին:

Բալկաններից մինչեւ Անդրկովկաս, Քերճոնից Միջին Ասիա, թերեւս հեռավոր Մոնղոլիա ընկած տարածքում Անկարայի կողմից ցուցաբերվող քաղաքական ակտիվությունը կարծես գալիս է հուշելու Օսմանյան կայսրության իրավական ժառանգորդի առկայության մասին: Հիրավի Անկարան այսօր ամեն կերպ Բալկաններում որպես շահագրգիռ կողմ հանդես գալու, Հյուսիսային Իրաքում ազդեցիկ դեր կատարելու, Կասպից ծովի նավթը վերահսկելու, Միջին Ասիայի եւ Հարավային Հանրապետություններ հետ տնտեսական եւ քաղաքական համագործակցության եզրը գտնելու լուրջ փորձ է անում: 21-րդ դարը գտնի չդառնա «համայն թուրքերի դարաշրջան»: Սակայն քաղաքական զարգացումների ընթացքը միջազգային ասպարեզում ներկայումս բավականին նպաստավոր է Թուրքիայի ազդեցության հետագա աճի համար: Ի վերջո, Թուրքիան կայացած դերություն է: Ներկայիս կառավարական ճգնաժամը հազիվ թե ազդի դրա քաղաքական ակտիվության վրա:

ՎԱՀԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ.

Գործադուլների նոր ալիք Թուրքիայում

Թուրքիի (Թուրքիայի աշխատանքի համընդհանուր կոնֆեդերացիա) կոչով եւ շարքի արդյունաբերության աշխատողների նախաձեռնությամբ սեպտեմբերի 20-ից-Անկարայում սկսված գործադուլը համազգային բնույթ է կրում: Գործադուլ են հայտարարել նաեւ նավթարդյունաբերության, մեքենաշինության, անտառային ու թղթարդյունաբերության, մեքենաշինության, կաթի ու տրանսպորտի տասնյակ հազարավոր բանվորներ: Կանգ են առել երկաթուղին ու նավահանգիստները: Գործադուլի մասնակից տասնյակ հազարավոր աշխատավորներ երկրի տարբեր քաղաքներից հոկտեմբերի 7-ին կժամանեն Անկարա եւ կմասնակցեն «Մեր ձայնը չեն լսում, բայց մենք կսիրենք մեր ձայնը լսել» նշանաբանը կրող մեծ հանրահավաքին: Սեպտեմբերի 28-ին գործադուլը մայրաքաղաքից տարածվել էր՝ ընդգրկելով Սամսուն, Իզմիր, Իզմիթ, Ադանա, Մարաշ, Այնթաբ եւ բազմաթիվ այլ քաղաքներ: Նույն օրվա դրությամբ՝ գործադուլին մասնակցում էր 370 հազար մարդ: Այդ օրը Անկարայում տեղի ունեցած հանրահավաքում գործադուլավորներին ողջունեցին եւ իրենց աջակցությունը հայտնեցին նաեւ նշված ուղղությամբ կառավարող կուսակցությունից ընտրված խորհրդարանի մի շարք պատգամավորներ:

Ա.Ս.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության պետական տեսչությունն Երեւանի կլիմայական բիոտեխնոլոգիայի ինստիտուտում

1. Հացաբլիսման եւ հրուշակեղենի
2. Կաթի եւ մսի ու մսի մշակման
3. Գազանաբուծության եւ ձկնաբուծության տեխնոլոգիաների, ինչպես նաեւ Անասնաբուժա-սանիտարական վերահսկողության մասնագիտությունների

կից գործում է նախապատրաստական բաժանմունք (գիշերօթիկ): Բաժանմունք կարող են դիմել, ինչպես միջնակարգի ավարտած, այնպես էլ տասներորդ դասարանում սովորողներ: Դասերը տեղի կունենան շաբաթական երեք օր ժամը 15.00-ից: Զեռնարկների ավարտվելուց հետո ունկնդիրներին տրվելու է կրթական ինստիտուտ ընդունված մասնագիտությամբ: Դասընթացներին հայոց լեզու, գրականություն, կենսաբանություն, քիմիա, թվաբանություն, տարրական մաթեմատիկա եւ երկրաչափություն ընդունված մասնագիտությունից:

Ուսման վարձը մեկ տարվա համար կազմում է 100 դոլարի համարժեք: Փաստաթղթեր ընդունվում են մինչեւ հոկտեմբերի 25-ը: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Կոտայքի մարզում գտնվող 19 հանասնաբուծական անասնաբուժական ինստիտուտի հասարակայնային մասնաբաժին. հեռախոս 53-93-37, 52-84-19: Ժամը 16.00-ից հետո 52-07-76, 25-[illegible]

Ռեկտոր

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Առաջին հայկանիշ. երաժշտությունը որպես խոսակցանք: 20-րդ դարի երկրորդական արվեստն այդ միտումը սկզբում արտահայտվում էքսպրեսիոնիզմի եւ սյուրռեալիզմի միջոցով. հետագայում դիմեց միջնադարյան եւ կանոնացված եկեղեցական երաժշտության նյութին: Այսինքն խոսակցանքի սուբյեկտիվ տարրերն ստացան այլ, վերանձնական բնույթ:

Երկրորդ հայկանիշ. զունաբանություն: Շատ է ասվել, որ Սարյանը նկարչի որդի է, եւ Սարգիս Սարյանի աշխարհը կոմպոզիտորի աշխարհի մի մասնիկն է: Մոտ 30 տարի առաջ գրված սիմֆոնիկ «Պանո Հայաստան» նշանավոր գործը դարձել է հիշյալ կապերի բեսոնմատիկական օրինակ: Իրոք, նմանությունները անմիջական են, ակնհայտ: Բայց այդ սյուիտի առավել ծագումբության գագաթներից մեկը հանդիսացող հիանալի Սիմֆոնիայում, ինչպես նաեւ դաշնամուրային «Երեք պոստլյուդիաներում», Լարային կվարտետի պոլիֆոնիկ հյուսվածքում գտնվում են կոմպոզիտորի գունաբանական նրբահնար երեւակայության դրսեւորումները:

Երրորդ հայկանիշ. բանահյուսություն, որը 20-րդ դարի համար դարձել է մերոդաբանության հիմնական գործիքներից մեկը հանդիսացող հիանալի Սիմֆոնիայում. ինչպես նաեւ դաշնամուրային «Երեք պոստլյուդիաներում», Լարային կվարտետի պոլիֆոնիկ հյուսվածքում գտնվում են կոմպոզիտորի գունաբանական նրբահնար երեւակայության դրսեւորումները:

Երրորդ հայկանիշ. բանահյուսություն, որը 20-րդ դարի համար դարձել է մերոդաբանության հիմնական գործիքներից մեկը հանդիսացող հիանալի Սիմֆոնիայում. ինչպես նաեւ դաշնամուրային «Երեք պոստլյուդիաներում», Լարային կվարտետի պոլիֆոնիկ հյուսվածքում գտնվում են կոմպոզիտորի գունաբանական նրբահնար երեւակայության դրսեւորումները:

Վերելք

Ղազարոս Սարյան. «Ստեղծագործությունն ինչ համար վիթխարի աշխատանաստվություն է, որը երբեմն խանգարել է մեծ մտահղացումների իրականացմանը»

Զարմանալի խոսքեր կարող է արտաբերել 75-ամյա կոմպոզիտորը: Թվում է՝ կյանքը նրան լիուլի հնարավորություն է տվել իմնահատատվելու, ներքին կասկածները փարատելու եւ ավանդական, բայց ճշմարիտ «ստեղծագործություն» ճանաչման անվերջանալի ուղի է» խոսքերն ասելու համար: Բայց Ղազարոս Սարյանն անկեղծորեն ուրիշ բան է ասում՝ ելնելով անանձնական փորձից, որը նրա համար չափվում է համաշխարհային հաղթակերտությամբ: Նման դիրքորոշումը ձեւավորում է դատապարտության մեծ զգացում, ներգործուն գեղարվեստական սկզբունքների զարգացման ու կատարելագործման վրա: Այս կապակցությամբ արվեստում Սարյանի ուղին դիտվում է որպես վերելք, որտեղ բոլոր ստեղծագործությունները դասավորված են փոխկապակցված մեկ տրամաբանական շարքում: Անկասկած, վերելքը չի իրականացվում որպես շարժում ճանաչման ստորին աստիճանից դեպի վերինը: Այն դարաշրջանի ոճային զարգացումն արտագոյող գործոնների համալիրի յուրօրինակ փոխակերպումն է: Ու թեեւ Ղազարոս Սարյանը չի դասկանում ոճական լայն ընդգրկում ունեցող կոմպոզիտորների թվին, արդիականության տարբեր հատկանիշները նրա երաժշտության մեջ առկա են բավական հստակ կերպով:

Սարյանի երաժշտությունը ներդաշնակորեն միավորում է երկու կողմերն էլ: Սուբյեկտիվ-Մոդեստիվ նախասկիզբն արտացոլում է արվեստագետի անհատականացված աշխարհընկալումը. ի դեպ, նա իր ստեղծագործության մեջ հեռու է գաղափարախոսական տրամադրություններից: Այն դրսեւորվում է մարդու անդաշտանվածության, չարին դիմակայելու անկարողության ձեւով (Սիմֆոնիա եւ Պասակալիա սիմֆոնիկ նվագախմբի համար, Սոնատ թավջութակի ու դաշնամուրի համար):

Օբյեկտիվացված, անանձնական բնույթի խոսակցանքը Սարյանն արտահայտում է խորալի միջոցներով: Խորալային կառույցներով են հագեցած Լարային երկրորդ կվարտետի եւ Պասակալիայի ծայրաբաժիններ. Ջութակի ու նվագախմբի կոնցերտի 2-րդ մասը: Այդուհանդերձ, երաժշտության հոգեւոր ճառագումը չի կանխորոշվում միայն հնօրյա արվեստի, այդ թվում նաեւ բարոկկոյի հետ կապված ժանրային-բեմական աղբյուրներով: Հոգեւոր այստեղ ընդհանուր կարեւորություն ունեցող բարոյական իդեալների վերացարկված արտահայտման ունակությունն է: Ըստ էության հենց բարոկկոյի արվեստն էլ՝ հանձին Բախի. Վիվալդիի. Հենդելի, գտնվում է այդ դիրքում: Սակայն 20-րդ դարն անցած դարաշրջանները հարմարեցնելով ներկային, իրականացրեց կիրառվող նյութի տեխնոլոգիական վերանայումը, ուստի հին եւ նոր երաժշտության մեղեդիական առանձնահատկությունները տարաբնույթ երեւույթներ են դրանց հոգեբանական ներգործությունների տարբերության դաստառով:

Երկրորդ հայկանիշ. զունաբանություն: Շատ է ասվել, որ Սարյանը նկարչի որդի է, եւ Սարգիս Սարյանի աշխարհը կոմպոզիտորի աշխարհի մի մասնիկն է: Մոտ 30 տարի առաջ գրված սիմֆոնիկ «Պանո Հայաստան» նշանավոր գործը դարձել է հիշյալ կապերի բեսոնմատիկական օրինակ: Իրոք, նմանությունները անմիջական են, ակնհայտ: Բայց այդ սյուիտի առավել էական մասում՝ «Արարատյան դաշտում», Մ. Սարյանի նկարի նմանակ տեսնելը բավական չէ: Երաժշտական հոսքը ծավալվում է զուտ իմպրեսիոնիստական արտահայտչականության կանոններով: Հնչյունային օբյեկտների (օբյեկտը թե մեկ հնչյուն է, թե հնչող համալիր, եւ թե տարածության մեջ ձգված ձայնանցում) շարժումը, դրանց փոփոխվող նրբերանգավորումը, լուսաստվերների խաղը, տեմբրային գունագեղությունը՝ այս ամենը համադասասխանում է իմպրեսիոնիստական գեղագիտության ոգուն, որը ժամանակին աշխարհում ծնեց բրյուիզմի, սոնորիզմի, նեոիմպրեսիոնիզմի երեւույթները: Այսպիսով, չլինելով իմպրեսիոնիզմի ոճական դպրոցի խիստ հետեւորդ, Ղազարոս Սարյանն՝ այդուհանդերձ դրա աշակերտն է: Եւ ոչ միայն «Արարատյան դաշտում», այլեւ հայ կոմպոզիտորների վերջին տասնամյակների ստեղծագործության գագաթներից մեկը հանդիսացող հիանալի Սիմֆոնիայում. ինչպես նաեւ դաշնամուրային «Երեք պոստլյուդիաներում», Լարային կվարտետի պոլիֆոնիկ հյուսվածքում գտնվում են կոմպոզիտորի գունաբանական նրբահնար երեւակայության դրսեւորումները:

Երրորդ հայկանիշ. բանահյուսություն, որը 20-րդ դարի համար դարձել է մերոդաբանության հիմնա-

հարց: Ոչ թե մեջբերել բանահյուսությունը, ինչպես 19-րդ դարում, այլ գտնել դրա ստեղծագործական մեկնաբանման ձեւեր սա է Ղազարոս Սարյանի դիրքորոշումը, որը մոտիկ է բազմաթիվ առաջավոր արվեստագետների դիրքորոշմանը: «Սիմֆոնիկ պատկերներից» մինչեւ Պասակալիա ընկած կյանքի չորս տասնամյակներում կոմպոզիտորը լուրջ զարգացում առրեց ազգագրական տարրերի՝ այսպես կոչված, տառադարձման բնագավառում: Նրա երաժշտության մեջ ազգային ոիթմերի. մեղեդիկ դարձվածքների. ձեւավորման օրինաչափությունների (օրինակ. Լարային կվարտետի երկմասանոց կառուցվածքը կարծես բխում է ժողովրդական երաժշտության երկմասանոց ձեւերից) առկայությունը ոչ թե դարզեցնում, այլ ընդհակառակը հարստացնում է նրա ստեղծագործությունների հնչյունային աշխարհը, ներգործում հարմոնիկ մտածողության յուրօրինակության վրա:

Վերջապես, եւս մեկ հայկանիշ, առանց որի չեմ մնա 20-րդ դարի դասմության մեջ: Դա վարդեստության հայկանիշն է: Մեծ վարդեստի որդին չէր կարող դրոֆեսիոնալիզմ չժառանգել որդես արվեստի որակ: Մանրամասնորեն հղկելով յուրաքանչյուր ստեղծագործություն, Ղազարոս Սարյանն ասես որոնում է միակ ճիշտ լուծումը: Եւ այն խոր դառնում է միակ ճիշտը. հանգի ծնունդ է առել ստեղծագործական արարման ոգուց ու մարդասիրությունից, անդադրում արվեստագետի մտից:

ՍԵՊՈՒՀԱՆ ՄԱՐԳԱՅԱՆ
Երեւանի կոնսերվատորիայի դրոֆեսոր

ԱԶԳԱԳԻՐ

Կինոյի տուն

Այսօր՝ ժամը 17-ին, Հենրիկ Մալյանի 70 ամյակին նվիրված հուբերելյոնին հրավիրում են Հայաստանի կինեմատոգրաֆիստների միությունը, «Հայֆիլմ» կինոստուդիան եւ Մալյան թատրոնը:

Արամ Խաչատրյան մեծ համերգասրահ

Վաղը Հայաստանի ֆիլհարմոնիկի կատարմամբ կհնչեն Գ. Ռոսսինիի Նախերգանքը, Սինյոր Բրուչինոն, Մ. Բրուխի Կոնցերտ ջութակի եւ նվագախմբի համար (մենակատար՝ Հռչիկ Հարությունյան), Վ. Ա. Մոցարտի Սիմֆոնիա թիվ 41 («Յուպիտեր»): Դիրիժոր՝ Արամ Կարաբեկյան (ԱՄՆ):

Պատանյան թատրոն

Այսօր երաժշտական կոմեդիայի թատրոնի հանդիսատեսը կարող է դիտել Գանչելիի «Խանումի արարքները», իսկ վաղը՝ Արամաշոս Պաղդասյանի «Աբեր Չեզ հետ» ներկայացումները: Սկիզբը՝ ժամը 16-ին:

Դրամատիկական թատրոն

Այսօր Հրաչյա Դափլանյան թատրոնում կներկայացվի Ժ. Հարությունյանի «Քո վերջին հանգրվանը» պիեսը, վաղը՝ Ռ. Սեւակի «Անվերջ վերադարձը»: Սկիզբը՝ ժամը 15-ին:

ԳՐՈՂՆԵՐԻ ՏՈՒՆ

Գիտաժողով նվիրված Ինտրայի 120-ամյակին

Սկսվեցին «Նոր Արաքսիի» հիմնադրման 70-րդ տարելիցի հանդիսությունները

Երեկ Հայաստանի գրողների միության դահլիճում կայացավ «Նոր Արաքսիի» հիմնադրման 70-ամյակի առթիվ կազմված մշակութային ծրագրի առաջին միջոցառումը՝ հայ մեծ բանաստեղծ, փիլիսոփա Տիրան Չրաքյանի (Ինտրա) ծննդյան 120-ամյակին նվիրված գիտաժողովը, որ կազմակերպել էր հանդիսությունների առիթով ստեղծված հոբելյանական հանձնաժողովը ՀԳՄ եւ ԳԱ գրականության ինստիտուտի աջակցությամբ:

Բացելով գիտաժողովը, ՀԳՄ քարտուղար Դավիթ Մուրադյանն այն նշանակալից իրադարձությունն համարեց հայ ժողովրդի մշակութային կյանքում: «Եկել է արժեքների վերահմաստավորման դահը, եւ Ինտրան իր արժանի տեղը կգրավի հայ բանաստեղծների ասդաղությում», ասաց նա:

Ինտրայի կյանքին, ստեղծագործության էջերին, աշխարհայացքին անդրադարձավ գրականագետ, բանասիրության դոկտոր Վլադիմիր Կիրակոսյանը՝ հույս հայտնելով, որ «Արաքսիի» հայրենակցական միությունն իր կարելին կգործադրի մի նոր, ավելի կատարյալ ժողովածու նվիրելու բանաստեղծի 125-ամյակին (նրա ստեղծագործությունների ամբողջական ժամանակ միակ ժողովածուն մեծ դժվարությամբ լույս է տեսել 1981-ին):

Բանասիրական գիտությունների թեկնածու, «Արաքսիի» միության վարչության անդամ Պետրոս Դեմիրճյանը ներկայացրեց Ինտրայի գեղարվեստական մտածողության, երկրայինով եւ երկնայինով, սահմանավորով եւ անսահմանով ներծծված հուզական բանաստեղծական աշխարհի առանձնահատկությունները: «Զգացողությամբ մարդկային, իմացությամբ՝ տիեզերական», այսպես բնութագրեց նա արաքսիրցի բանաստեղծին եւ փիլիսոփային:

Ինտրայի արձակ էջերի եւ բանաստեղծությունների մի գաղտիկ փնջի ընթերցումներով հանդես եկան ամուսնորդներ Մարի Պահուսյանը, Ազատ Գասպարյանը, Կամո Տեր-Պետրոսյանը:

Ավելացնենք, որ 1915-ին վերադարձած հոգեկան ցնցումը՝ ճակատագրական եղավ Ինտրայի համար, սկսեց հրաժարվել իր ստեղծագործությունից, դարձնելով նրան... Աստվարանի քարոզիչ, որի համար էլ 1921-ին ձերբակալվեց թուրքական իշխանությունների կողմից եւ դատապարտվեց ամսորի, որտեղ նույն թվականին էլ կնքեց մահկանացուն:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԲՈՒՆԻՆ-125

Ֆրանսիայում կանգկացվեն Բունինյան օրեր

Փարիզի Ժակ Օֆենբախ փողոցի այն տան դատին, որտեղ 1920-1953-ին ապրել էր դուռ գրող, 1933-ին Նոբելյան մրցանակի դափնեկիր Իվան Բունինը, ամրացվեց բրոնզե հուշատախտակ: Ֆրանսիայում տուսով կանցկացվեն Բունինի 125-ամյակին նվիրված օրեր: Ամբողջ Եվրոպայից, ինչպես նաեւ Մոսկվայից, Վառոնեժից, Եղեցից եւ այլ հաղաքներից Փարիզում կհավաքվեն հայտնի բունինագետներ, որոնք միջազգային գիտաժողովում մոտ երեք տասնյակ զեկուցումներ կկարդան նրա կյանքի ու գործունեության մասին:

Նրանք իրենց աշխատանքը կշարունակեն միջերկրածովյան Գրաս քաղաքում, որտեղ «Բելվեդեր» եւ «Ժանետ» առանձնատներում երկար տարիներ ապրել է ռուս դասական գրողը: Դրանց դատերին նույնպես ամրացված են հուշատախտակներ:

Գրասում կայանալիք կոլոքվիումի ընթացքում կցուցադրվեն ռուս տարագիր բեմադրիչներ Իվան Մոզժուխինի եւ Ալեքսանդր Վոլկովի նկարահանած կինոֆիլմեր: Այնտեղ բունինագետներ տեղական իշխանությունների հետ կծանոթանան Իվան Բունինի հուշարձանի նախագծի այն տարբերակներին, որոնք առաջարկել է մոսկվացի քանդակագործ Վլադիմիր Դորդկին: Գրասցի քանդակագործներից մեկն այդ հուշարձանը կդասդասի մինչեւ 1996 թվականը: Դրա բացման արթիվ կանցկացվի Գրասում Բունինին այցելած Սերգեյ Ռախմանինովի երաժշտության երեկույթ:

Ֆրանսիայում ռուս գրողի հանդեպ հետաքրքրությունն աճում է մեկ տարի առաջ հիմնված Բունինի բարեկամների միջազգային ընկերակցության շնորհիվ, որն իր շարքերում առայժմ ունի երկու տասնյակ անդամ: Ընկերակցությունն ստեղծվեց այն բանից հետո, երբ բանասեր, ռուս գրականության մասնագետ Քլեր Օշարդ դոկտորական թեզ դաշտպանեց Բունինի ստեղծագործության ժամանակաշրջանի արձակի վերաբերյալ: Ընկերակցությունը գլխավորում է բարդոյի հայտնի ֆիզիկոս Գավրիիլ Սիմոնովը:

Բունինի բարեկամներ մատդիր են հրատարակչական գործունեությամբ զբաղվել նաեւ Ռուսաստանում: Մասնավորապես հրատարակության են դատրաստում նրա արձակ երկերի գիրք, որի մեջ կմտնեն նախկինում երբեք չհրատարակված փոքր դատմվածքներ: Ինչպես նշում է բանասեր եւ դատմաբան Անդրեյ Ռաչինսկին Բունինը էրոտիկ բնույթի այդ դատմվածքները թաքցրել է գրադարակում եւ մտադիր չի եղել հրատարակել: Բունինի հետ կապված մյուս անհայտ նյութերի ու նամակների հետ դրանք դատահվում են Անգլիայի Լիդս քաղաքի համալսարանի արխիվներում:

Բացի դրանից, Բունինի բարեկամների ընկերակցությունը ծրագրում է Ռուսաստանում հրատարակել նրա անհայտ հրատարակախոսական գործերը, նամակներ եւ վերջապես առաջին անգամ մեծ գրողի հարենիքում տպագրել նրա երկերի լիակատար ակադեմիական ժողովածուն:

«ԻԶՎԵՍՏԻԱ»

ԵՐԵՎԱՆ

Բարեգործական համերգ մանկատների օգտին

ԵՐԵՎԱՆ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՄՆԱՐԿ: Սեպտեմբերի 30-ին Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի կունենա բարեգործական համերգ Հայաստանի մանկատների համար: Միջոցառման նախաձեռնողներն են Հայերի օգնության միության «Ակնոնի» մասնաճյուղը եւ փոքր դահլիճի տնօրինությունը: Համերգին կմասնակցեն Երեւանի դետական կամերային նվագախումբը ժողովրդական արտիստ Ռոբերտ Սիսարոնյանի դեկավարությամբ եւ «Տկզար» համույթը: Մենակատարներն են Լավրենտի Պողոսյանը եւ Հակոբ Սարյանը: Մուտքն ազատ է:

ՆԿԱՐՇՈՒԹՅՈՒՆ

Եւս մեկ ցուցահանդես

Բացվեց Հրանտ Թադեւոսյանի անհատականը

Երեկ Գալերեա դատկերասրահում իր հերթական անհատական ցուցահանդեսը բացեց գեղանկարիչ Հրանտ Թադեւոսյանը: Բացմանը ներկա էին նկարչի հարազատները, լրագրողներ եւ արվեստագետներ, որոնց ուշադրությանը ներկայացվեց նկարչի՝ մոտ 30 աշխատանքի: Բացման խոսքով հանդես եկավ տեխնիկական գիտությունների թեկնածու Վարդգես Եղիազարյանը եւ հեռուստարագրող Ռաֆայել Մարտիրոսյանը, որոնք անդրադարձան Հրանտ Թադեւոսյան նկարչի անցյալ եւ ներկա ստեղծագործական ընթացքին: Ցուցադրված նկարներից ուշագրավ էին «Երկրագուն», «Արձանիկի դարը», «Դաղար» աշխատանքները: Հրանտ Թադեւոսյանը հայտնեց, որ դատրաստվում է հաջորդ ամսին բացել ավելի մեծ ցուցահանդես: Ուրախալի է, որ ակնկալվելիք ցուցահանդեսը տարվա մեջ թվով երրորդը կլինի նկարչի համար: «Ազգը» ժամանակին անդրադարձել է նախորդ կազմակերպվածներին:

Գ. Ա.

digitised by A.R.A.R.@

Մարզական

ԹԵԹԵՎ ԱՍԼԵՏԻԿԱ

Պրիվալովայի սեւ մրցաշրջանը

ԳԻԼԳՈՐ ԱՍԻՐՅԱՆ
Վալանս, Ֆրանսիա

1995 թ. աշխարհահռչակ ռուս ազգավազորդուհի Իրինա Պրիվալովայի համար անհաջողությունների տարի է: Նա մի քանի անգամ ոսկե մեդալի փայլը տեսավ, բայց չկարողացավ գրպանը դնել: Գյոթեբորգում տեղի ունեցած աշխարհի առաջնության 100 մ վազքատարածությունում Պրիվալովան ստացավ միայն բronզե մեդալ, իսկ 200 մ վազքատարածությունում գրավեց երկրորդ տեղը, զիջելով իր վաղեմի մրցակցուհի Մարլեն Օսսիին (Նամիբիա): Այս վերջին վազքատարածությունում երկուսն էլ օգտվեցին ամենիկուհի Գվեն Տորենսի անհաջողությունից, որը գլխավորելով վազքը, վերջնագծի մատույցներում անսպասելիորեն ընկավ:

«Ինչպես կարողանամ հաշտվել այս անհաջողության հետ, երբ Գվենիա էի մեկնել հաղթելու վճռականությամբ», հայտարարում է Պրիվալովան ուրենքաղ: Նա մի քանի ամիս է, ինչ զանգվածում է ցավից: Պրիվալովայի մկաններից մեկն է կտրվել: Նրա մարզիչ

Իրինա Պրիվալովան

ամուսինը Վլադիմիր Պարաշչուկը փոքր-ինչ հուսահատվել է կյանքի նման անհաջող շրջադարձից: «Տեսնենք առաջիկա ամռանն ինչ կլինի», ասում է Պրիվալովան: Նա ուզում էր հերքել այն լուրը, որ վերջերս տարածել էին Արեւմուտքում, թե իբր Պրիվալովան խնդիրներ ունի մաֆիայի հետ: «Նախկին Խորհրդային Միությունում կյանքը հեշտ չէ, բայց շատ դրամ շահելով այստեղ՝ Մոսկվայում կարող ես ավելի լավ ապրել, քան Արեւմտյան Եվրոպայի որեւէ երկրում: Այն լուրերը, թե իբր մեր երեխաներին ուղարկել ենք Ֆրանսիա մաֆիայից փրկելու համար, անհիմն են, քանի որ նրանք Ֆրանսիա են մեկնել արձակուրդն անցկացնելու», ասում է տաղանդավոր արագավազորդուհին: Պրիվալովա-Պարաշչուկ զույգը Մոսկվայում գնել է 6 սենյականոց մի բնակարան եւ ապրում է հանգիստ: «Կարեւորը միայն սպրինտում առաջանալն է», հայտարարում է Իրինան:

Ալանտան մոտենում է եւ Պրիվալովան «ոսկե երազներ» ունի իրականացնելու: Երազներ, որոնք կարող են իրական դառնալ միայն համառ աշխատանքով:

ԱՆԳԼԻԱՅԱՐԱ

Ադրբեջանցիների ռեկորդային հաշվով պարտությունը

Ադրբեջանցիները «պատմական» հաղթանակ տարան Ֆրանսիայի հավաքականի դեմ: 10-0 հաշիվը պատկանում է նաեւ Ֆրանսիայի հավաքականի համար, որը երբեք նման բարձր հաշվով հաղթանակ չի տարել:

Ահա Ֆրանսիայի հավաքականի բարձր հաշվով հաղթանակները.

1913	Ֆրանսիա-Լյուքսեմբուրգ	8-0
1924	Ֆրանսիա-Լատվիա	7-0
1953	Ֆրանսիա-Լյուքսեմբուրգ	8-0
1957	Ֆրանսիա-Իսլանդիա	8-0
1958	Ֆրանսիա-Հունաստան	7-1
1960	Ֆրանսիա-Չիլի	6-0
1980	ԱՄՆ-Ֆրանսիա	0-6
1980	Կիպրոս-Ֆրանսիա	0-7
1985	Ֆրանսիա-Լյուքսեմբուրգ	6-0

Բայց Եվրոպայի առաջնության խաղերում Ֆրանսիա-Ադրբեջան հանդիպման 10-0 հաշիվը ռեկորդ չէր, քանի որ 1983 թ. դեկտեմբերի 21-ին Սեպիլիայում Իսպանիայի հավաքականը 12-1 հաշվով ջախջախեց պարտության մատնեց Մալթայի հավաքականին:

Ահա Եվրոպայի առաջնության խաղերում արձանագրված արտաքին մյուս խոշոր հաշիվները.

1980	Իսպանիա-Ալբանիա	9-0
1982	Անգլիա-Լյուքսեմբուրգ	9-0
1971	Լյուքսեմբուրգ-Հոլանդիա	0-8
1980	Գերմանիա-Մալթա	8-0
1983	Իռլանդիա-Մալթա	8-0
1987	Անգլիա-Թուրքիա	8-0
1987	Հոլանդիա-Կիպրոս	8-0
1990	Մալթա-Հոլանդիա	0-8
1994	Պորտուգալ.-Լիխտենշտեյն	8-0

Ադրբեջանի հավաքականը, որի եվրոպական ճանապարհը շատ երկար է, կարող է փոքր-ինչ իրեն մխիթարել, ասելով, որ երբ բոլոր 8 հանդիպումներում պարտություն է կրել, խփելով 2 գոլակ եւ ընդունելով 29, առա Սան Մարինոն խփել է միայն 1 գոլակ, իսկ սեփական դարպասն ընդունել 28, կամ Լիխտենշտեյնը, որը խփել է նույնքան 1 գոլակ եւ բաց թողել 36: Բայց Լիխտենշտեյնը մեկ հանդիպում ավարտել է ոչ-ոքի: Ադրբեջանցիները կարող են ծիծաղել նաեւ Էստոնացիների վրա, որոնք բոլոր 9 հանդիպումներում պարտվել են:

ՍՍԵԿՈՍԵԵՐ

Ռոմարիոն ուշագնաց վիճակում

«Ֆլամենգո» թիմի պարապմունքի ժամանակ աշխարհի գլխավոր տարած լավագույն ֆուտբոլիստ, Բրազիլիայի հավաքականի հարձակվող Ռոմարիոն, անսպասելիորեն զգալով գիտակցությունը, անշարժ ընկավ գետնին: Ռոմարիոն տարբեր 5 րոպե ուշագնաց վիճակում: Նրան անմիջապես տեղափոխեցին հոսպիտալ: Բժիշկները մանրակրկիտ քննությունից հետո ոչ մի անոմալիա չհայտնաբերեցին: Ըստ բժիշկների, Ռոմարիոն գլխի դիմաց է ստացել մի ուժեղ ճնշման հետեւանքով: Մի քանի օրվա դադարից հետո Ռոմարիոն կրկին բռնեց մարզադաշտի ճանապարհը, եւ ամբողջ Բրազիլիան հանգիստ շունչ քաշեց:

Գ. Ա.



ՇԱԽՄԱՏ

Անանդը մերժեց Կասպարովի առաջարկը եւ պարտվեց

Նյու Յորքում տեղի ունեցող Պրոֆեսիոնալ շախմատիստների ասոցիացիայի վարկածով աշխարհի առաջնության Կասպարով-Անանդ մրցախաղի 11-րդ պարտիան էլ արդյունավետ չէր ունեցավ: Սպիտակներով խաղացող հնդիկ գրոսմայստեր Վիշվանաթան Անանդը 32-րդ քայլին ստիպված անձնատուր եղավ: Կասպարովը երկրորդ անընդմեջ հաղթանակը տարավ եւ հաշվի մեջ առաջ անցավ՝ 6-5: Ինչպես տեղեկացնում է «Փաստ» հեռագրական գործակալությունը, 28-րդ քայլում բագուհիները փոխանակելուց հետո, Կասպարովն առաջարկեց խաղաղ դաշն կնքել, սակայն հնդիկ գրոսմայստերը հրաժարվեց՝ նախընտրելով սրել դիրքը: Անանդը որոշեց զոհելով զինվորը որակ շահել: Թվում էր, թե նրա մտահղացումը կիրականանա, բայց կորցնելով զգոնությունը, հավակնորդն ընկավ աշխարհի չեմպիոնի պատրաստած թակարդը եւ ստիպված իրեն պարտված ճանաչեց: Հանդիպումից հետո Կասպարովը լրագրողներին հայտարարեց, որ այս հաղթանակը իր համար անակնկալ էր, քանի որ բագուհիների փոխանակումից հետո ամենահարմարը ոչ-ոքին էր: Միաժամանակ նա նշեց, որ Անանդն ասիճանաբար զիջում է դիրքերը, քանի որ նույնիսկ սպիտակներով վստահ չի խաղում: Աշխարհի չեմպիոնի տիտղոսը պահպանելու համար մնացած 9

Հարվածի պատրաստ Գարրի Կասպարովը

հանդիպումներում Գարրի Կասպարովին անհրաժեշտ է վաստակել առնվազն 4 միավոր: Մրցախաղը թեւակոխել է վճռական փուլ եւ կողմերն անցել են մերձամարտի:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ

Բեկֆերի կինը՝ բարեբար

Աշխարհի ուժեղագույն թենիսիստներից մեկի գերմանացի Բորիս Բեկֆերի կինը՝ Բարբարա Բեկֆերը, գրաստեր է: Նա Նյու Յորքի փողոցներում, երբ անցուն եւ աղքատ մարդ է տեսնում, անմիջապես դրամապանակից զումար է հանում օգնելու համար: Միլիոնատեր Բորիս Բեկֆերի մանկենուհի կինը, Բարբարան, ձեր ուշադրությանը ներկայացվող նկարում մի քանի դոլար է տալիս աղքատ ու խեղճ կնոջը, քանի որ աշխարհի ամենահարուստ երկրում խեղճերի եւ աղքատների կյանքն ավելի դժվար քան այլուր:

Բարբարա Բեկֆերը

ԱԼԳԱՊԱՏՈՒԹՅՈՒՆ

Հերթական տուրում

Այսօր կսկսվի 33 բարձրագույն խմբի առաջնության հերթական 7-րդ տուրը: Տեղի կունենա երկու հանդիպում: Կմրցեն ՀՄՄ-ն ու «Վանը», «Արագածը» ու «Փյունիկը»: Հաջորդ օրն ուժերը կչափեն.

«Ջանգեզուր»-«Կոտայք»
«Ազնավուր»-«Շիրակ»
«Արարատ»-«Ղարաբաղ»

Բոլոր հանդիպումները կսկսվեն ժամը 15-ին:

Կմասնակցեն Բարսելոնի մրցաշարին

Հոկտեմբերի 2-ին Իսպանիայի Բարսելոն քաղաքում մեկնարկելու է մինչեւ 16 եւ 18 տարեկան ֆուտբոլիստների միջազգային մրցաշարը, որին մասնակցելու են նաեւ Հայաստանի թիմերը: Սա Եվրոպայի առաջնության փնջային մրցաշարերից առաջ հայ պատանի ֆուտբոլիստների համար ուժերի լուրջ ստուգատես կլինի: Նրանք Իսպանիա կմեկնեն այսօր: Հիշեցնենք, որ նոյեմբերին Հոլանդիայում Հայաստանի 18 տարեկան ֆուտբոլիստներն իրենց ուժերը կչափեն տեղի եւ կիպրոսի թիմերի հետ: Ապրիլում Մալթայում կանցկացվի 16 տարեկան ֆուտբոլիստների մրցաշարը: Հայ պատանիները կմրցեն Շվեյցարիայի, Հարավսլավիայի եւ Մալթայի հավաքականների հետ: Հաղթող թիմերը կստանան Եվրոպայի առաջնության եզրափակիչի ուղեգիր:

ՆՏ

Հաջողությունը հյուրերի կողմն էր

Վոլեյբոլի Հայաստանի ազգային ֆեդերացիայի եւ «Հայֆ» մարզական ակումբի հրավերով Հայաստանում գտնվող Իրանի Ասրոպատականի Մահաբատ քաղաքի գավառապետարանի թիմն իր վերջին երկու հանդիպումն անցկացրեց մեր երկրի մարզիկների հետ: Այդ խաղերում նույնպես հաջողությունը ժպտաց հյուրերին. նրանք 3:0 հաշվով հաղթեցին Հայաստանի չեմպիոն «Արմավիր» թիմին եւ 3:1 հաշվով՝ «Հայֆ» մարզակումբի վոլեյբոլիստներին: Առաջին երկու հանդիպումներում նույնպես, ինչպես ավելի վաղ հաղորդվել է, իրանցի հյուրերը հաղթական էին տարել «Հայֆ» ակումբի նկատմամբ: Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիայում Արմենպրեսի թղթակցին հայտնեցին, որ նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 2-ը նախատեսվում է «Հայֆ» թիմի պատասխան այցը Իրան: Չի բացառվում, որ նման հանդիպումներն ամենայնական դառնան:

ԱՐՍԵՆ ԹՈՔԻ

ՀԱՄԱՌՈՏ

Պետերբուրգը՝ գլխավոր թեկնածուների թվում

Օլիմպիական գիտակների կարծիքով, Սանկտ Պետերբուրգը Բեյջինգուն, Հոնկոնգը եւ Սամբուլի հետ միասին 4 գլխավոր թեկնածուների թվում է, որոնք հավակնում են 2004 թ. Օլիմպիական խաղերը կազմակերպելու: Մյուս թեկնածուներն են Բուենոս Այրեսը, Սան Խուանը, Ռիո դե Ժանեյրոն, Ստոկհոլմը, Օսլոն, Պեկինը, Սեուիլան, Լիոնը, եւ հավանաբար, Բոստոնը: Միջազգային օլիմպիական կոմիտեն 1996 թ. մարտին կորոշի 4 հիմնական թեկնածուներին, իսկ 2000 թ. օլիմպիական խաղերի մայրաքաղաքի անունը վերջնականապես հայտնի կդառնա 1997 թ. սեպտեմբերին, Լոզանում:

«Աստղերը» վերադարձան

Տեւական ընդմիջումից հետո Բելգիայի հավաքական վերադարձան թիմի առաջատար խաղացողներից էնցո Շիֆոն եւ Մարկ Դեգրիզը, որոնք չէին մասնակցել Բելգիայի ֆուտբոլի 100 ամյակին նվիրված Բելգիա-Գերմանիա ընկերական խաղին: Սակայն Շիֆոն եւ Դեգրիզը մասնակցեցին Եվրոպայի առաջնության Բելգիա-Դանիա որոշիչ հանդիպմանը: Նրանց ներկայությունը չօգնեց Բելգիայի հավաքականին, որն ինչպես հայտնի է, սեփական հարկի տակ 1-3 հաշվով պարտվեց Եվրոպայի չեմպիոնին: Չնայած անհաջողությանը, հավանաբար, էնցո Շիֆոն եւ Մարկ Դեգրիզը հանդես գան Երեւանում եւ մասնակցեն հոկտեմբերի 7-ին կայանալիք Հայաստան-Բելգիա խաղին:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

Դանակահարող մրցավարը դեռ պտտվում է

Մոտ անցյալում Հարավային Ամերիկայի մարզադաշտերում ֆուտբոլասերները մի քանի անգամ ականատես են եղել, երբ մրցավարները նշանակելով 11 մետրանոց հարված, գրպանից զենք են հանել, տուժած կողմի ֆուտբոլիստներից պատասխանվելու եւ նրանց վախեցնելու համար, որպեսզի հարգեն ֆուտբոլային օրենքները: Աշխարհի շատ մարզադաշտերում դեղձեր են եղել, երբ մրցավարները խաղացողներից ավելի արագ վազելով փնտրել են երկի դռները, որպեսզի իրենց կյանքը փրկեն վայրենի դարձած հետաքրքրող ամբոխից: Քիչ չեն եղել նաեւ հարբած մրցավարները: Վերջերս ամերիկյան նոր տիպի մրցավար: Ուրուգվայում հանդիպումներից մեկի ժամանակ ֆուտբոլիստներից մեկը բորոտում էր մրցավարի անիրավացի վճռի առթիվ, երբ վերջինս զայրացած գրպանից հանեց դանակը եւ մի քանի անգամ դանակահարեց «անհնազանդ» ֆուտբոլիստին: Խաղացողն անմիջապես հիվանդանոց տեղափոխվեց: Նրա կյանքն այլեւս վտանգի տակ չէ: Իսկ մրցավարն առագավազորդի պես բռնեց մարզադաշտի երկի ճանապարհը եւ վերջին տեղեկությունների համաձայն դեռ վազում է պատից փրկվելու համար:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԸ

Ռուսաստանը բարոյական պարտք ունի Ղարաբաղի նկատմամբ

Սկիզբը էջ 1

Բնականաբար տարածաշրջանում իրենց շահերն ունեցող հարևան մյուս պետությունը եւ առաջին հերթին Ռուսաստանն ու Իրանը բացասաբար են ընդունում այդ նախաձեռնությունները ու բանկանում են, որ նավթամուղն ու գազամուղը, ինչպես նաեւ նրանց համակարգում՝ կառուցվելիք երկաթգիծն ու ավտոճանապարհները անցնեն իրենց տարածքներով, ինչը բացի տնտեսական շահույթից, իրավունք է տալիս վերահսկելու այդ հաղորդակցությունները եւ քաղաքական ազդեցություն ձեռք բերելու Կովկասի եւ միջինասիական հանրապետությունների վրա, որտեղից եւ դուրս են բերվելու նավթի ու գազի հիմնական ղեկավարները: Ինչպիսին հանձինս Հայաստանի եւ Ղարաբաղի այս դարաշրջանում հանդես է գալիս որպես անցնցիկ գոտի: Ադրբեջանական կողմն անտարակույս ունի իր ինքնուրույն նշանակությունը: Սակայն չպետք է մոռանալ, որ դրա հարաբերությունները բավականին փխ են նախատեսված են 2-3 տասնամյակների առաջընթացման համար: Հիմնական հարցությունը գտնվում է Կասպից ծովից դեպի արեւելք ընկած երկրներում՝ Ղազախստանում, Թուրքմենստանում, Ուզբեկստանում: Եւ խոսքը ոչ միայն ու ոչ այնքան նավթի, այլ հսկայական քաղաքական ու տնտեսական այսպես ասած շեմարանի մասին է, որտեղ Արեւմուտքի համար շափազանց կարեւոր է ձեռք բերել կայուն ազդեցություն, հեռու պահելով Իրանին եւ Ռուսաստանին:

Հայկական քաղաքական ուժերը, հավանաբար, դեմ չեն, որ նավթամուղը, գազամուղը, երկաթգիծը եւ մյուս հաղորդակցությունները անցնեն հայկական տարածքով: Հարցն այն է, թե մենք հայերս, ինչ գին պետք է վճարենք դրա դիմաց: Անշուշտ, հայկական շահերից չի բխում, որ Ղարաբաղն այս դեղիում մնա Ադրբեջանի կազմում ինչ-որ անընդունելի կարգավիճակով: Եթե ԼՂՀ-ն պահպանելու է իր ձեռքբերումները եւ իրավունքները ու շնորհիվ նավթամուղի պետք է տնտեսական-քաղաքական ինչ-որ հարաբերություններ հաստատի Ադրբեջանի հետ, որպեսզի իրագործվի նավթամուղի շահագործումը, իսկ Հայաստանը բնականաբար ստանա շահույթի իր բաժինը եւ նավթամուղը վերահսկելու հնարավորություն, ապա հիշյալ տարբերակի իրականացումն այնքան էլ անհավանական չի թվում:

Սակայն չի բացառվում, որ նավթամուղի անցկացմանը նշված երթուղով խոչնդոտելու է երկու հանգամանք: Առաջինը Բաքվի հավակնությունները եւ նավթի դիմաց ստացած եկամուտների շնորհիվ Լեռնային Ղարաբաղին ծնկի բերելու ցանկությունը: Երկրորդ հնարավոր խոչնդոտը այն է, որ նավթի հոսի վրա թռչող գերտերությունները եւ նրանց շահերը նորից կսիրեն նրանց դիմել արդեն փորձված միջոցներից մեկին, այսինքն բորբոքել դաստիարակի կրակը նավթամուղի հնարավոր ճանապարհների վրա, մրցակիցներին նավթամուղի հնարավորություններից զրկելու նպատակով: Լեզգիներից եւ բալիներից բացի, կազմակերպված ու մարտունակ Ղարաբաղը, անտարակույս, որոշ երկրների համար ամենափորձված եւ հարմար լծակն է: Սակայն, այդ երկրների քաղաքական շրջանակները, որոնք, հավանաբար, փորձելու են օգտագործել դարաբաղյան լծակը, երեւի քաջ գիտակցում են, որ ԼՂՀ-ն այլեւս այն չէ, ինչ 2-3 տարի առաջ: Լեռնային Ղարաբաղն այսօր ավելի փորձված դիվանագիտություն եւ զինված ուժեր ունի, որոնք հստակ տարբերում են, որն է սեփական շահը, որը ուրիշի ռազմավարական խաղի, ընդ որում՝ բավականին կասկածելի խաղի մասնակցելու հեռանկարը: Այստեղ շատ նուրբ հաշվարկների կարիք կա դարաբաղյան կողմից եւ այդ հաշվարկները թվում է, թե արվում են բանակցությունների ընթացքում: Անշուշտ, դարաբաղյան լծակի օգտագործումը չի բացառվում, սակայն հույս փայփայենք, որ հայ առաջնորդները այդ լծակը կօգտագործեն հօգուտ Ղարաբաղի ժողովրդի արմատական շահերի, ամեն ինչ կանեն, որպեսզի դա լինի ԼՂՀ սեփական քաղաքական, այլ ոչ թե գերտերությունների համար հարմար լծակ, եթե չկա սեփական զգալի օգուտ այս կամ այն գործողության ընթացքում եւ ինչ-որ բայլեր կկատարվեն միմիայն այդ բայլերի հաստատման դեպքում հետո, այլ ոչ թե որեւէ ուժի բեկադրանքով:

Այսօր բոլորիս համար պարզ է, որ արցախահայությունը լուծում էր ոչ միայն իր ազգային խնդիրները, այլ նաեւ ոչ ակամա (ընդգծումը մերն է՝ Վ. Ա.) կատարում էր նաեւ սեւ աշխատանք Ռուսաստանի համար: Կրկնենք՝ ոչ ակամա: Շնորհիվ այդ աշխատանքի Ադրբեջանը մտավ ԱՊՀ կազմը, ադրբեջանական դեկավարությունը դարձավ ավելի ընդունելի ռուսների համար, քան, ասենք, նախորդ բացահայտ ազգայնական իշխանությունը: Այսօր Ադրբեջանն ավելի հակված է լսելու Մոսկվային եւ այդ բոլորը դարաբաղյան ժողովրդի ազգային-ազատագրական շարժման շնորհիվ: Եթե Ռուսաստանը մտադիր է իրագործել իր քաղաքական, տնտեսական եւ ռազմավարական ծրագրերը տարածաշրջանում, ապա նա, կողքից ասած, պարտավոր է վճարել այն սեւագործ աշխատանքի համար, որը կատարեց Լեռնային Ղարաբաղը: Եթե Ադրբեջանը կանխազգալով Ղարաբաղ կորցնելը, կարող է ընդառաջել ռուսական պահանջներին եւ դրա դիմաց պահպանել Ղարաբաղը ոչդեպ վճար, ապա նույնքան իրավունք, եթե ոչ ավելին, ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որն Ադրբեջանի հակառուսական դիրքորոշման մեղմացման դիմաց կարող է զիջումներ պահանջել Ռուսաստանից: Այդ պահանջները ավելի քան իրավացի են եւ պետք է իրականացվեն: Դա Ռուսաստանի բարոյական պարտքն է Ղարաբաղի նկատմամբ:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՍԻՆՅԱՆ
Սեփ. թղթակից, Ստեփանակերտ

CONCERT AGS AGENCY

AGS նորաստեղծ համերգային գործակալությունը հրավիրում է հոկտեմբերի 24-ին եւ 25-ին «Հրազդան» մարզադաշտ «ԱՍՏԵՂԱՅԻՆ ԱՄԱՌ» վերջին տոնական շոու ծրագրի փակմանը Երեւանում:

ԴՈՒՔ ԿՄԻԱՎՈՐՎԵՔ

ԱԼԼԱ ՊՈՒԳԱՉՈՎԱՅԻՆ
ՖԻԼԻՊ ԿԻՐԿՈՐՈՎԻՆ

Տոնական հրավառությունից հետո կանցկացվի վիճակախաղ:
Ծրագրի եկամտից գումար կհատկացվի վիրավոր ազատամարտիկների բուժմանը եւ զոհված ազատամարտիկների ընտանիքներին:
Տոմսերը վաճառվում են Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի, Ֆիլհարմոնիայի տոմսարկղերում, Անի հյուրանոցի առաջին հարկում, «Ավիատրանս» գործակալությունում, Աբովյան 6 ճայնագրման սրահում, մետրոյի բոլոր կայարաններում եւ մարդաշատ վայրերում:
Շտապեցեք, վերջին 15 օրում տոմսերը կրկնակի թանկանալու են:
Մեր հասցեն «Անի» հյուրանոց 503, 506, 508 սենյակներ: Հեռ. 565343, 594508, 594503:

«ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ»
ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

30.09 ՇԱԲԱԹ
18.00 MCM տեսահոլովակ
18.15 Բենի Հիլ շոու
19.30 «Այդ սմանչելի ռուսական որսը»
21.00 Սանդրայի համերգ
21.25 Հայտարարություններ, գովազդ
21.30 «Միակնանի թագավորը»
23.00 «Ճնշարան»
00.30 «Սատանայի պատանդները»

1.10 ԿԻՐԱԿԻ
17.00 MCM տեսահոլովակ
17.30 «Բրուդ փողոցը»
19.00 «Շրջագայություն»
20.30 Մուլտֆիլմ
21.10 MCM տեսահոլովակ
21.25 Հայտարարություններ, գովազդ
21.30 «Այսուն առյան դիմաց»
23.00 MCM տեսահոլովակ
23.15 «Անկման ժամանակը»
00.45 «Արեւադարձային ծլուն»

02.10 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ
18.00 MCM տեսահոլովակ
18.30 «Սինե»
20.00 «Բոնցիամարտիկը»
21.25 Հայտարարություններ, գովազդ
21.30 «Մայլ Թայսոնի լավագույն մենամարտը»
23.00 MCM տեսահոլովակ
23.15 «Ներին ուժը»
00.45 «Սառը պողպատը»

Մեր հասցեն՝ Խրիմյանի 13, կենցաղի տուն: Հեռ. 44-34-13: Ընդունվում են գովազդներ:

ՄՈՍԿՎԱ

Հետաքրքիր է, թե ինչպես են բերման ենթարկելու Պավել Գրաչովին

Անսպասելի ընթացք է ստացել «Մոսկովսկի կոմսոմոլեց» թերթի լրագրող Վադիմ Պոեգլիի գործը, որը Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովի կողմից մեղադրվել է զրպարտության մեջ: Վադիմ Պոեգլին «Պաշա-մերսեդեսը» վերնագրով մի հոդված է հրատարակել, որը վիրավորել է նախարարին: Հակառակի պես այդ վիրավորական մականունը պինդ է կպել գեներալին, եւ նա այնքան է զայրացել, որ փոխանակ գործ հարուցի, ինչպես ընդունված է քաղաքացիական օրենսգրքով, դիմել է գլխավոր դատախազություն, որն էլ լրագրողի դեմ զրպարտության մեղադրանքով քրեական գործ է հարուցել: Եթե առաջին դեպքում նախարարը կարող է չներկայանալ դատավարությանը՝ իր փոխարեն ուղարկելով որեւիցե ներկայացուցչի, ապա զրպարտության քրեական մեղադրանքի դեպքում պարտավոր է անձամբ ներկայանալ դատարան, քանի որ միայն ինքը կարող է բացատրել, թե որն է, զրպարտությունը եւ ճշտել մանրամասները, որոնց հիման վրա էլ լրագրողը կարող է քրեական պատասխանատվություն կրել: Հերթական դատական նիստը նշանակված էր սեպտեմբերի 27-ին: Մինչ այդ նախարարն արդեն երկու անգամ չէր ներկայացել դատական նիստերին, որպես պատճառ նշելով իր զբաղված լինելը: Այս անգամ էլ գեներալը խուսափեց լրագրողի հետ դեմ առ դեմ մնալուց: Պաշտպանության նախարարությունից եկած նամակից դատավորն ու ներկաները տեղեկացան, որ նախարարը մեկնել է հեռավոր մի կայազոր, որպեսզի տեսչական սուգում անցկացնի: Մոսկվայի Պրեսնյայի շրջանի ժողովրդական դատավոր Օլգա Գովորովան գեներալի այդ պատճառաբանությունը հարգելի չհամարեց եւ կայացրեց մի որոշում, որը նիստին ներկա գտնվող լրագրողներն ընդունեցին ծափահարություններով: Ըստ այդ որոշման, Պավել Գրաչովը պետք է հարկադրական միջոցներով բերման ենթարկվի, քանի որ արդեն երրորդ անգամն է՝ չի ներկայանում դատարան, որտեղ պետք է հանդես գա որպես տուժած կողմ: Նախարարին բերման ենթարկելու պարտականությունը դրված է նրա բնակության վայրի՝ թիվ 169 ոստիկանական բաժանմունքի վրա: Միաժամանակ դատավորը չեղյալ է հայտարարել քննության կողմից լրագրողի դեմ ընտրված կանխարգելիչ միջոցը՝ չմեկնելու ստորագրությունը: Հաջորդ դատական նիստը նշանակվել է հոկտեմբերի 25-ին: Հետաքրքիր է, ի՞նչ մեթենայով կներկայանա Պավել Գրաչովն այդ նիստին: Մերսեդեսո՞վ, թե՞...

Գ. Ե.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 3-ին, ժամը 14-ին, Գրողների միության մեծ դահլիճում տեղի կունենա հանդիսություն սփյուռքահայ բանաստեղծուհի **Վեհանուշ Թեքեյանի** հետ:
Հայաստանի գրողների միություն

CONCERT AGS AGENCY

ՈՐՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԳՍ» համերգային գործակալությունը

ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ

Երեւանի հաղթամերձ շրջանների բնակիչներին որպես ֆիրմայի լիազոր ներկայացուցիչներ:

Ցանկացողներին խնդրվում է ներկայանալ անձնագրով, «Անի» հյուրանոց, 503 սենյակ կամ զանգահարել 594503 հեռախոսահամարով:

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՈՐՈՇԻՉՈՎ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԱՊԱՐԱՏ

ՊՐՈՏՈՆ

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

◆ *կորոշի եւ կհուշի Ձեզ զանգահարողի հեռախոսահամարը, ինչպես նաեւ կհիշի Ձեզ նախկինում զանգահարած 67 հեռախոսահամարները եւ կվերարտադրի դիսպլեյի վրա.*
◆ *կօգնի Ձեզ զանգահարել ժամանակավորապես զբաղված հեռախոսահամարներով եւ կհայտնի երբ կաղ կլինի (ավտոմատ զանգում).*
◆ *կհիշի եւ կհավաքի հաղթային կոդերում Ձեզ անհրաժեշտ 40 համարներից ցանկացածը ընդմիջումներով եւ մի շարք այլ ֆունկցիաներ:*

Սնուցումը միայն հեռախոսային գծից:
Ապարատը նորմալ աշխատում է նաեւ Երեւանի հեռախոսային գծերում:
Գինը պայմանագրային, հնարավոր է զեղչ:
Հեռ. 63-76-45, 63-02-40

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1954 Տպաքանակը՝ 7000 Ստորագրված է տպագրության՝ 29. 09. 1995 Գինը՝ 50 դրամ

digitised by A.R.A.R.@